*Հավելված՝*
*ՀՀ հաշվեքննիչ պալատի*
*2022 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 214-Ա որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

## <u>ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ</u>

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**2022**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 3-4էջ

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ 5-6էջ

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 7-8էջ

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵ 9-39էջ

5. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 40-43էջ

6. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 44-57էջ

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 58-62էջ

8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

# 1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

| | |
|---|---|
| **Հաշվեքննության հիմքը** | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 156-Ա որոշում |
| **Հաշվեքննության օբյեկտը** | ՀՀ ոստիկանություն: |
| **Հաշվեքննության առարկան** | ՀՀ պետական բյուջեի 2022 թվականի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն: |
| **Հաշվեքննության չափանիշները** | ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշում, ՀՀ կառավարության 23.12.2021 թվականի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին թիվ 2121-Ն որոշում, ՀՀ կառավարության 15.06.2018 թվականի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի |

Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 706-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» N 751-Լ որոշում, ինչպես նաև կանոնակարգող այլ իրավական ակտեր ու պայմանագրերից բխող իրավահարաբերություններ:

| | |
|---|---|
| **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ: |
| **Հաշվեքննության կատարման ժամկետը** | 2022 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 28-ը: |
| **Հաշվեքննության մեթոդաբանությունը և ընթացակարգերը** | Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության գործող մեթոդաբանությունների համաձայն:<br><br>Հաշվեքննության ընթացքում, ըստ անհրաժեշտության, կիրառվել են՝ զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական և վերահաշվարկ ընթացակարգերը: |
| **Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում** | Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի տասներորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը: |

## 2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 308-Ա որոշման հավելվածի (ՀՀ ՀՊ 2022 թվականի գործունեության ծրագրի) առաջին մասի 8-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով, ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 156-Ա որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքի հիման վրա «ՀՀ ոստիկանություն» հաշվեքննության օբյեկտում հաշվեքննություն է իրականացվել՝ 2022 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն նկատմամբ: «ՀՀ ոստիկանություն» հաշվեքննության օբյեկտից 25.08.2022 թվականի թիվ ՀՊԵ/05/333-2022 գրությամբ սահմանված կարգով պահանջվել է անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում, ինչին ի պատասխան սահմանված ժամկետից («Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջ) 10 օր ուշացումով, 13.09.2022 թվականին N 056գ գրությամբ ներկայացվել է ոչ ամբողջական տեղեկատվություն (գրությամբ ՀՀ ոստիկանության կողմից վարձակալված և վարձակալության հանձնված 29 անշարժ գույքերի միավորների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է ոչ ամբողջական, իսկ առկա շուրջ 1800 միավոր տրանսպորտային միջոցների՝ ենթակայության, վազքի, սարքինության, վառելիքի հատկացման և համապատասխան այլի վերաբերյալ տեղեկատվությունը առհասարակ չի տրամադրվել), սակայն հիմք ընդունելով, որ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով սույն հաշվեքննությունը սահմանափակված է կատարման ու ՀՀ Ազգային ժողով ներկայացման առավելագույն ժամկետով, հաշվեքննության արդյունքները ամփոփվել են ներկայացված տվյալների շրջանակում:

Ուսումնասիրելով առկա տեղեկատվությունը, օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային (LSFINANCE և LSREP) համակարգերի շտեմարաններից, ինչպես նաև հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար: 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննության իրականացման համար հիմնական ռիսկային խնդիրներ են դիտարկվել ինչպես աշխատանքի վարձատրության ու դրան հավասարեցված վճարների, այնպես էլ՝ գնումների ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ գնման գործընթացների, այդ թվում՝ գնումների պլանավորման, գնման գործընթացների կազմակերպման (ներառյալ գնման առարկաների բնութագրերի հաստատումը), պայմանագրերի կնքման, կատարման և կառավարման հետ կապված խնդիրները:

Անդրադարձ է կատարվել նաև Պետական մարմնի գործունեությունը կանոնակարգող մի շարք օրենքների ու իրավական ակտերի պահանջների համապատասխան գործելու և բյուջետային ծրագրերի պլանավորման ու դրանց կատարման աստիճանին:

«ՀՀ ոստիկանություն» հաշվեքննության օբյեկտի կողմից 2022 թվականի վեց ամիսների ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ իրականացված հաշվեքննության արդյունքում, ֆինանսական հաշվեքննության տեսանկյունից՝ էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել: Իսկ համապատասխանության տեսակի հաշվեքննության կատարման արդյունքում արձանագրվել են որոշակի անհամապատասխանություններ:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվածի համաձայն, Հաշվեքննիչ պալատի 11.10.2022 թվականի թիվ ՀՊԵ/01/454-2022 գրությամբ «ՀՀ ոստիկանություն» հաշվեքննության օբյեկտի ղեկավարին է ներկայացվել ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 156-Ա որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքի հիման վրա «ՀՀ ոստիկանությունում 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների կատարման նկատմամբ» իրականացված հաշվեքննության արձանագրությունը, որին ի պատասխան ՀՀ ոստիկանության 21.10.2022 թվականի (ՀՀ ՀՊ մտից թիվ ՀՊՄ371/2022) գրությամբ ՀՀ հաշվեքննիչ պալատ է ներկայացվել հաշվեքննության արձանագրության բովանդակության վերաբերյալ առարկություններ, բացատրություններ ու պարզաբանումներ, որոնք ևս ներառվել են սույն ընթացիկ եզրակացությունում:

# 3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ ոստիկանության ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի 6 ամիսների ծախսերի պլանը, համաձայն կատարողի կողմից ներկայացված առաջին կիսամյակի հաշվետվությունների, կազմել է 33,837,345.06 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 38,595,779.32 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 4,758,434.26 հազ. դրամի ավելացում 14.06%-ի չափով: Փաստացի ֆինանսավորվել է 35,882,662.86 հազ. դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ՝ 92.97%, դրամարկղային ծախսը կազմել է 35,846,044.22 հազ. դրամ կամ 92.88%, փաստացի ծախսը՝ 36,454,330.20 հազ. դրամ՝ 94.45%: Դրամարկղային և փաստացի ծախսերի շեղումը՝ 608,285.98 հազ. դրամի չափով, պայմանավորված է տվյալ ժամանակահատվածում ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով դեբիտորական, կրեդիտորական պարտքերի, այդ թվում պահեստավորված միջոցների շարժով:
Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները, ըստ ծրագրերի և միջոցառումների ներկայացվում են հավելված 1-ում:

2022 թվականի վեց ամիսների ընթացքում, ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված հաշվետվության տվյալների համաձայն՝ պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերը պլանավորվել են՝ 13,458,828.9 հազ. դրամի չափով, որի դիմաց փաստացի հավաքագրման (գանձման) ցուցանիշը կազմել է 15,767,471.8 հազ. դրամ կամ գերակատարվել է 2,308,642.9 հազ. դրամով՝ 17.15%-ով: Ըստ առանձին աղբյուրների պլանավորված եկամուտները, փաստացի ստացված եկամուտները, փաստացի և պլանային ցուցանիշների շեղումները, ինչպես նաև շեղման հիմնապատճառները՝ ըստ ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված պարզաբանման, ներկայացված են ստորև բերված հավելված 2-ում:

Գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների պլանային ցուցանիշի գերակատարումը հիմնականում պայմանավորված է այլ եկամուտների հավաքագրման գերակատարմամբ: Մասնավորապես՝

- Տեսանկարահանող սարքերի միջոցով արձանագրված խախտումների դիմաց մուտքերը գերակատարվել են 659,167.4 հազ. դրամով կամ 16.48 %-ով,
- Ճանապարհապարեկային ծառայողների կողմից արձանագրված խախտումների դիմաց մուտքերը գերակատարվել 229,862.9 հազ. դրամով կամ 11.77%-ով,

- Ոստիկանության կողմից ծառայությունների մատուցումից մուտքերը պայմանավորված ՀՀ Կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի «Տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի չափորոշիչները սահմանելու մասին» N 816-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1033-Ն որոշմամբ մեծ պահանջարկ ունեցող ավտոմոբիլի հաշվառման համարանիշների դիմաց գանձվող մուտքերի աճով, գերակատարվել են 1,112,631.6 հազ. դրամով կամ 87.74%-ով:

Առաջին աղբյուրից ստացված եկամուտների գերակատարումը, ըստ ՀՀ ոստիկանության ներկայացվածի պայմանավորված է եղել երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում վարչարարության արդյունավետության բարձրացմամբ, իսկ երկրորդ աղբյուրից ստացված եկամուտներինը՝ ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով հաճախակի ուժեղացված ծառայություններ իրականացնելու հանգամանքներով: Երրորդ աղբյուրից հավաքագրված եկամուտների գերակատարումը վերագրվում է ՃՈ-ի ծառայությունների մատուցումից մուտքերին, որոնք նախատեսվածից ավելին են եղել՝ պայմանավորված վարորդական վկայական ստանալու համար գործնական քննությունների համար գանձվող մուտքերի, ցանկալի և մեծ պահանջարկ ունեցող ավտոմոբիլի հաշվառման համարանիշների դիմաց գանձվող մուտքերի աճով:

«ՀՀ ոստիկանություն» հաշվեքննության օբյեկտի կողմից 2022 թվականի վեց ամիսների ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ իրականացված հաշվեքննության արդյունքում, ֆինանսական հաշվեքննության տեսանկյունից՝ էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

# 4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի /այն է՝ երեք օրվա ընթացքում/ 2022 թվականի օգոստոսի 25 թիվ ՀՊԵ/05/333-2022 գրությամբ ՀՀ ոստիկանությունից պահանջվել էր հաշվեքննության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, որին ի պատասխան սահմանված ժամկետից 10 օր ուշացումով, 13.09.2022 թվականին ՀՀ ոստիկանության N 056գ գրությամբ ներկայացվել է ոչ ամբողջական տեղեկատվություն, որի արդյունքում չի պահպանվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջը, այն է՝ Հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձը պարտավոր է՝ հաշվեքննության ընթացքում հաշվեքննողի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հաշվեքննության առարկայի վերաբերյալ առկա և հասանելի ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, փաստաթղթեր և գրանցումներ:

Վերը նշված գրությամբ ՀՀ ոստիկանության կողմից վարձակալված և վարձակալության հանձնված 29 անշարժ գույքերի միավորների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է ոչ ամբողջական, իսկ առկա շուրջ 1800 միավոր տրանսպորտային միջոցների՝ ենթակայության, վազքի, սարքինության, վառելիքի հատկացման և այլի վերաբերյալ տեղեկատվությունը առհասարակ չի տրամադրվել:

## 4.1 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԳՀԾՁԲ -2022/ՔԱՐՏԵԶ

ՀՀ ոստիկանության կարիքների համար 2021 թվականի դեկտեմբերին Լոռու և Շիրակի մարզերի տեղագրական քարտեզների կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022/Քարտեզ ծածկագրով գնանշման հարցման միջոցով կազմակերպվել է գնման ընթացակարգ: 20.12.2021 թվականին ընթացակարգի բացման նիստում արձանագրվել է, որ հայտ են ներկայացրել թվով 3 մասնակից, որոնց հայտերը գնահատվել են բավարար և վերջիններիս 23.12.2021 թվականին առաջարկված գների նվազեցման նպատակով հրավիրվել են միաժամանակյա բանակցություններ:

Առաջարկված գները և բանակցության արդյունքում նվազեցված գները՝ աղյուսակ 1-ում

Աղյուսակ 1
(հազ. դրամ)

| | Նախահաշվային արժեք | 45,000.0 | |
|---|---|---|---|
| # | Մասնակից | Գնառաջարկ (հազ. դրամ) | Բանակցության արդյունքով գները (առանց ԱԱՀ) |
| 1 | ԳԵՈՄԱՓԻՍ | 75,100.0 (ԱԱՀ-ով չաշխատող) | 24,700.0 |
| 2 | ՍՕՍ Սիսթեմս ՍՊԸ | 37,500.0 (առանց ԱԱՀ) | 21,900.0 |
| 3 | ՏԵԽՆՈԻՆԺԻՆԵՐԻՆԳ ՍՊԸ | 30,000.0 (ԱԱՀ-ով չաշխատող) | 22,000.0 |

Արդյունքում 07.01.2022 թվականին ՀՀ ոստիկանության և «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ միջև կնքվել է պետության կարիքների համար տեղագրական քարտեզների կազմման ծառայությունների մատուցման պետական գնման ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022/Քարտեզ պայմանագիրը: 31.03.2022 թվականին կողմերի միջև կնքվել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ - 2022/Քարտեզ գնման պայմանագրի N1 Համաձայնագիրը՝ ընդհանուր 26,280.0 հազ. դրամ արժեքով (ներառյալ ԱԱՀ) և ծառայության մատակարարման ժամկետ է սահմանվել համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, պատվիրատուի մոտ պահանջը առաջանալու պահից մինչև 60 օր:

15.06.2022 թվականին կողմերի միջև կազմվել է պայմանագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունը, որի հիման վրա էլ 27.06.2022 թվականին պետական բյուջեից ամբողջությամբ վճարվել է պայմանագրի արդյունքի համար:

**1) Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ**

Հաշվեքննող խմբի կողմից ՀՀ ոստիկանության Կ և ՏՏ վարչությունում (հայտը նախագծող պատասխանատու ստորաբաժանում) իրականացվել է պայմանագրի արդյունքների զննում և դիտարկում, ինչի արդյունքում արձանագրվել է.

1. «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ մատուցել է թերի ծառայություն, և վերջինիս արդյունքը չի համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին

ա) ըստ տեխնիկական բնութագրի մատակարարը Open Street Map ծրագրային ապահովման միջոցով ստեղծված քարտեզների համար պետք է ապահովեր թեսթավորման միջավայր, որը թույլ կտար (3) Վեբ միջավայրում հնարավորություն

տալ քարտեզների վրա նշել կետ և ստանալ մոտակա հասցեն, (4) Վեբ միջավայրում հնարավորություն տալ քարտեզի վրա նշել երկու կետ և ստանալ դրանց միջև կարճագույն ճանապարհը: Վերը նշված երկու ֆունկցիաններն էլ չեն աշխատում:

բ) Լոռվա և Շիրակի մարզերի թվային քարտեզի հիմքը պետք է պարունակեր հետևյալ վեկտորային շերտերը և յուրաքանչյուր շերտին կապակցված ատրիբուտները՝ Շենքեր և շինությունների պարտադիր ատրիբուտներից՝

*հասցե - լրացված է թերի կամ սխալ

*անվանում – բացակայում է

*ֆունկցիոնալ նշանակություն – բացակայում է

*հարկայնություն – բացակայում է

Տարածքների (այգիներ, զբոսայգիներ, պուրակներ, հրապարակներ, ոստիկանական և այլ իրավական կարգավիճակ ունեցող տարածքներ) պարտադիր ատրիբուտներից

*անվանում – թերի՝ 80%-ով բացակայում է

*տեսակ – բացակայում է

Ճանապարհային ցանցի պարտադիր ատրիբուտներից

*Ծածկույթի տեսակ – բացակայում է

Խաչմերուկները նշված չեն:

Ճանապարհային ցանց ըստ երթևեկության ուղիների – թերի՝ բացի միջպետական ճանապարհներից, մնացած ողջ ճանապարհային ցանցի երթևեկության ուղիները նշված չեն:

Ճանապարհային երթևեկության նշաններ – շերտը բացակայում է:

Ճանապարհային երթևեկության նշանների ազդեցության գոտի – շերտը առհասարակ բացակայում է:

Տեսախցիկներ – շերտը բացակայում է:

Այսպիսով՝ չնայած վերը նշված բազմաթիվ թերությունների, պայմանագրի շրջանակներում «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի մատակարարած ծառայությանը՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից, տրվել է դրական եզրակացություն և ծառայությունը ընդունվել է ամբողջությամբ:

Չի պահպանվել պայմանագրի 1.1, 2.4.1, 5.1 կետերի պահանջները, որոնց վրա հասնելու հետևանքով պետք է պատասխանատվության միջոց կիրառվեր մատակարարի նկատմամբ պայմանագրի 5.2 կետով սահմանվածի համապատասխան:

2. ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022/Քարտեզ պայմանագրի հավելված 3.1-ի համաձայն, պայմանագրի արդյունքը մատակարարի կողմից ՀՀ ոստիկանությանը հանձնելու փաստը ֆիքսելու նպատակով 15.06.2022 թվականին կազմվել է փոխադարձ ԱԿՏ: Նույն օրն էլ կողմերը կազմել և կնքել են պայմանագրի կատարման արդյունքների

Հանձնման-ընդունման արձանագրություն՝ չնայած այն հանգամանքին, որ արձանագրության հաստատման համար հիմք հանդիսացող երկու փաստաթղթերից մեկը՝ դրական եզրակացությունը, գնման հայտի նախագծի ներկայացուցիչը տվել է երկու օր ուշ, այսինքն՝ 17.06.2022 թվականին: Ստացվում է, որ ՀՀ ոստիկանությունը պայմանագրի արդյունքը ընդունել է, առանց մասնագիտական դրական եզրակացության:

Չի պահպանվել ՀՀ Կառավարություն 2017 թվականի մայիսի 4-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N526-Ն որոշման կարգի 17-րդ գլխի 109-րդ կետի պահանջը, այն է՝ «արձանագրությունը ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը…»:

**2) *Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*՝**

Արձանագրված թերությունների մասով 12.10.2022 թվականին ՀՀ ոստիկանության պետի հանձնարարությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում անցկացվում է ծառայողական քննություն:

**3) *Հաշվեքննողի մեկնաբանությունը*՝**

Ընդունվել է ի գիտություն:

-----------------------------------------------

**4.2 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ -22-ՏԵՍԱԽՑԻԿ-2022/ԿԿՏՎ**

ՀՀ ոստիկանության կարիքների համար 2021 թվականի դեկտեմբերին Լոռու և Շիրակի մարզերի հերթապահ պարեկային մեքենաների համար համացանցային տեսահսկող տեսախցիկների (150 հատ) և դրանց ծրագրային ապահովման ձեռքբերման նպատակով՝ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-22-ՏԵՍԱԽՑԻԿ-2022/ԿԿՏՎ ծածկագրով, էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպվել է գնման ընթացակարգ: Էլեկտրոնային աճուրդի արդյունքներով հաղթող ճանաչված «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ հետ ՀՀ ոստիկանությունը 26.01.2022 թվականին կնքել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ -22-ՏԵՍԱԽՑԻԿ-2022/ԿԿՏՎ պայմանագիրը՝ ընդհանուր 145,320.0 հազ. դրամ արժեքով:

13.04.2022 թվականին ՀՀ ոստիկանության և «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ միջև կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-22-ՏԵՍԱԽՑԻԿ-2022/ԿԿՏՎ գնման պայմանագրի N1 Համաձայնագիրը՝ պայմանագրում նշված «Համացանցային տեսահսկող տեսախցիկներ GD-CI-AT2505B»-ի և ծրագրային փաթեթի մատակարարման և վճարման կարգավորման համար:

**1)Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ**

Հաշվեքննող խմբի կողմից ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունում, Կ և ՏՏ վարչությունում (հայտը նախագծող պատասխանատու ստորաբաժանում) և Շիրակի մարզի պարեկային ծառայությունում իրականացվել է պայմանագրի արդյունքների զննում և դիտարկում, ինչի արդյունքում արձանագրվել է՝

1. «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ մատուցել է թերի ծառայություն, և վերջինիս արդյունքը չի համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին՝ մասնավորապես.

ա) Ծրագրային ապահովման պայմանների մասով, ըստ տեխնիկական բնութագրի, մատակարարը տեսախցիկի հետ կապված գործառույթներից բացի պետք է նաև տրամադրեր ՀՀ Ոստիկանության շահագործման ղեկավարման կենտրոնի /OMC/ ծրագրային ապահովման համար անհրաժեշտ գործառույթները և ինտեգրման կարողությունը:

Ծրագրային ապահովումը պիտի՝

* տրամադրի հավելվածի ծրագրային միջերեսը և օգտատիրոջ միջերեսը՝ տեսախցիկները անհրաժեշտ փոխդասավորությամբ կարգավորելու համար - բացակայում է

* ապահովի պարբերական սինքրոնացում և պահանջված պետհամարանիշների թարմացում ցանկացած պահի - բացակայում է

* պահի հայտնաբերված տվյալների բազան և ընդունի պետհամարանիշները - բացակայում է

* միացնի ցանցի ծանուցումը և ձայնային ազդանշանային սարքը՝ պահանջված պետհամարանիշի հայտնաբերման համար - բացակայում է

* պարբերաբար տրամադրի հայտնաբերված պետհամարանիշների աշխարհագրական դիրքի տեղեկություն՝ օգտագործելով ՀՀ ոստիկանության միջերես ծրագրի համակարգը /API/ - բացակայում է

* տրամադրի միջերես ծրագրի համակարգ և օգտատիրոջ միջերեսը՝ հարցնելու պահպանված տեղեկությունը ըստ պետհամարանիշի, ժամանակահատվածի և աշխարհագրական դիրքի - բացակայում է

* եթե տեխնիկապես հնարավոր է, ապա պարբերաբար արխիվացնել տեսագրությունները արխիվի սերվերի ներսում - բացակայում է
* տրամադրի միջերես ծրագրի համակարգը և օգտատիրոջ միջերեսը՝ հարցնելու տեսագրությունների արխիվը, ըստ ժամանակահատվածի, տեսախցիկի և հնարավորություն ստեղծել տեսագրությունը հետ տալու համար - բացակայում է
* տրամադրի և ապահովի հավելվածի ծրագրային միջերեսը և ապահովի կապը տեսախցիկների հետ - բացակայում է

բ) Վահանակի հավելվածի մասով, ըստ տեխնիկական բնութագրի, մատակարարը պետք է ստեղծեր վահանակի հավելված, որը պետք է ապահովեր տեսախցիկների կարգավորման գործառնությունը (IP, մեքենայի ցուցիչը և այլն), կարգավորեր սև ցուցակում հայտնված պետհամարանիշները, ստանար տեղեկություն տեսախցիկի միացման մասին, ստանար արձանագրություններ սև ցուցակում հայտնված պետհամարանիշների վերաբերյալ տեսախցիկների հետ, բացահայտեր պետհամարանիշի հայտնաբերման պատմությունը՝ կապված աշխարհագրական դիրքի հետ, բացահայտեր տեսախցիկների տեսագրությունները և այլն:

Հավելվածի միջերեսը պիտի ներգրավված լիներ ՀՀ ոստիկանության OMC-ում և լիներ օգտատիրոջ լիազորում: Վահանակի ամեն մի մասի մուտքագրումը պետք է վերահսկելի լիներ թույլատրումների միջոցով: Վահանակը պետք է ունենար հետևյալ բաժինները՝

*գործառնություն - բացակայում է
*մոնիտորինգ - բացակայում է
*հաշվետվություն - բացակայում է
*վերլուծություն - բացակայում է

Յուրաքանչյուր բաժնի ֆունկցիոնալ նշանակությունը թվարկված է պայմանագրի տեխնիկական բնութագրում

Ըստ էության վահանակի հավելված մատակարարի կողմից չի ստեղծվել:

Չի պահպանվել պայմանագրի 1.1 և 2.4.4 կետերի պահանջները:

2. Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է հստակ պահանջ, ըստ որի պահանջվող տեսախցիկները պետք է ունենան մեքենաների պետհամարանիշների ճանաչման ֆունկցիա 300կմ/ժ արագությամբ շարժվելիս: Մատակարարը ՀՀ ոստիկանություն է ներկայացրել ցպահանջ մի գրություն, ըստ որի ABETECHS GmbH ընկերության գործադիր տնօրենը հավաստում է, որ GD-CI-AT2505B մոդելի տեսախցիկները կարող են տարբերակել և ճանաչել պետհամարանիշները մինչև 400կմ/ժ արագությամբ շարժվելիս: Պատասխանատու ստորաբաժանումը առանց փորձաքննության կամ ստուգաչափման, հիմք ընդունելով վերոհիշյալ

գրությունը, տվել է դրական եզրակացություն առ այն, որ մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին:

ՀՀ ոստիկանության Կ և ՏՏ վարչության (պատասխանատու ստորաբաժանում) աշխատակիցների և Շիրակի մարզի պարեկային ծառայության աշխատակիցների կողմից նախնական փորձարկվել է նաև տեսախցիկների պետհամարանիշների ճանաչման ֆունկցիան արագության ընթացքում, ու նախնական արձանագրվել է, որ պարեկային ծառայության մեքենաների մեջ տեղադրված GD-CI-AT2505B մոդելի տեսախցիկները՝ առավելագույն արագությունը, որի ժամանակ կարող էին ճանաչել մեքենայի պետհամարանիշները, դա 220-230կմ/ժ է (գումարային արագություն):
Ըստ այդմ, բավարար տվյալներով չի հիմնավորվում, որ «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ կողմից մատակարարված տեսախցիկների բնութագրերը համապատասխանում են պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին: Հաշվեքննող խմբի կողմից առաջարկվել է պատասխանատու ստորաբաժանմանը, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ[1] միջոցներ ձեռնարկել պարզելու արդյո՞ք մատակարարված տեսախցիկների տեխնիկական հնարավորությունը թույլ է տալիս ճանաչել մեքենաների պետհամարանիշները՝ 300կմ/ժ արագությամբ շարժվելիս:
Հակառակ դեպքում, պետք է արձանագրել, որ չի պահպանվել պայմանագրի 1.1 և 2.4.4 կետերի պահանջները, իսկ ՀՀ ոստիկանությանը առաջարկել իրացնել պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված իր իրավունքները:

3. ՀՀ կառավարություն 2017 թվականի մայիսի 4-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N 526-Ն որոշման կարգի 17-րդ գլխի 108-րդ կետի համաձայն պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ նույն գլխի 109-րդ կետի համաձայն արձանագրությունը ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին կամ

[1] https://asuratechnologies.com/2017/03/27/lpr-systems-working-150-200-250-kmh-speed/ մաքսիմալ արագության հաշվարկման ուղեցույց

մատակարարված ապրանքի որակական հատկանիշները գերազանցում են պայմանագրով սահմանված պահանջները՝ ապահովելով կարիքի բավարարումը:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-22-ՏԵՍԱԽՑԻԿ-2022/ԿԿՏՎ գնման պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ գնման հայտը նախագծած ներկայացուցիչը ԴՐԱԿԱՆ եզրակացությունը տվել է 19.05.2022 թվականին: Սակայն հաշվի չառնելով սույն փաստը 02.05.2022 թվականին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև կազմվել է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրություն, որով փաստացի ընդունվել է պայմանագրի արդյունքը:

Չի պահպանվել ՀՀ Կառավարություն 2017 թվականի մայիսի 4-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ գլխի 109-րդ կետի պահանջը, այն է՝ Արձանագրությունը ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը:

**2)*Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*՝**

N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-22-Տեսախցիկ-2022/ԿԿԴՎ պայմանագրի շրջանակներում «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊ ընկերության կողմից ՀՀ ոստիկանությանը ծրագրային փաթեթ չի հանձնվել, ինչը պարզ է դարձել հանձնման, ընդունման և ակտ արձանագրությունները ուսումնասիրության արդյունքնում:

Նշված խախտման վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետի հանձնարարությամբ կատարված ծառայողական քննության արդյունքում կազմված փաստաթղթերը 22.08.2022 թվականին ուղարկվել են ՀՀ դատախազություն, որի հիմքով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում 27.08.2022 թվականին նախաձեռնվել է թիվ 62243722 քրեական վարույթը:

**3)*Հաշվեքննողի մեկնաբանությունը*՝**

Ընդունվել է ի գիտություն, սակայն պայմանագրի տեխնիկական բնութագիրը, ըստ այնտեղ շարադրվածի էության, իր մեջ ներառում է ծրագրային ապահովման փաթեթ,

իսկ 02.05.2022 թվականին կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը և հանձնման-ընդունման արձանագրությունը, որոնք կազմվել են ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017 թվականի N228-Ն և 01.04.2015 թվականի N179-Ն հրամանների համաձայն սահմանված հավելվածներով, չէին կարող այլ բան պարունակել, քան պայմանագրի տեխնիկական բնութագրով պահանջվում է: Պարզապես ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված Ձև-երում տեխնիկական բնութագիրը շարադրվում է համառոտ, որը չի ենթադրում բուն իմաստի փոփոխություն:

-----------------------------------------------

**4.3 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ -32-ՏԵՍԱԽՑԻԿ/2022/ՊԾ-1**

ՀՀ ոստիկանության կարիքների համար, 2021 թվականի դեկտեմբերին, Լոռու և Շիրակի մարզերի Պարեկային ծառայության համար տեսահսկողության համակարգի՝ համազգեստին ամրացվող տեսախցիկ և հատուկ նախատեսված հիշողության պահպանման և լիցքավորման կայաններ (500 լրակազմ), ձեռք բերելու նպատակով ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-32-ՏԵՍԱԽՑԻԿ/2022/ՊԾ-1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպվել է գնման ընթացակարգ: Էլեկտրոնային աճուրդի արդյունքներով հաղթող ճանաչված «Ալիկանտե» ՍՊԸ հետ ՀՀ ոստիկանությունը 24.01.2022 թվականին կնքել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-32-ՏԵՍԱԽՑԻԿ/2022/ՊԾ-1 պայմանագիրը՝ ընդհանուր 151,860.0 հազ. դրամ արժեքով:
13.04.2022 թվականին ՀՀ ոստիկանության և «Ալիկանտե» ՍՊԸ միջև կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-32-ՏԵՍԱԽՑԻԿ/2022/ՊԾ-1 գնման պայմանագրի N1 Համաձայնագիրը՝ պայմանագրում նշված «Տեսահսկողության համակարգ WA 7 SP»-ի մատակարարման և վճարման կարգավորման համար, ինչպես նաև ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 01.06.2022 թվականը:

**1)Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ**

Հաշվեքննող խմբի կողմից ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունում և Կ և ՏՏ վարչությունում (հայտը նախագծող պատասխանատու ստորաբաժանում) իրականացվել է պայմանագրի արդյունքների զննում և վերահաշվարկ, ինչի արդյունքում արձանագրվել է՝

Մասնավորապես, մատակարար կազմակերպությունը ապրանքը մատակարարել է 18 աշխատանքային օր ուշացումով՝ չի պահպանվել պայմանագրի հավելված N2-ի պահանջները և պայմանագրի 2.4.1 կետի պահանջները, սակայն

վերոնշյալ փաստը պատասխանատու ստորաբաժանման կողմից չի արձանագրվել և մատակարարված ապրանքի դիմաց գումարը վճարվել է ամբողջությամբ, որով էլ վերջինս չի պահպանվել ՀՀ Կառավարություն 2017 թվականի մայիսի 4-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 33-րդ կետի 5) ենթակետի պահանջը, այն է՝ գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պատվիրատուն պարտավոր է ապահովել պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ, ինչպես նաև չի պահպանվել պայմանագրի 2.2.4 կետի և 6.2 կետի պահանջները:

Ի դեպ, պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումից արդեն 2 շաբաթ անց՝ 04.07.2022 թվականին, «Ալիկանտե» ՍՊԸ տնօրենը գրությամբ դիմում է ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Վ.Մովսիսյանին, հայտնելով, որ տվյալ պայմանագրի շրջանակում տեղի է ունեցել սահմանված ժամկետից ուշացած մատակարարում, սակայն ոստիկանության կողմից տվյալ փաստը չի արձանագրվել և վճարումը կատարվել է ամբողջությամբ: Նույն գրությամբ մատակարարը առաջարկել է ոստիկանությանը հաշվարկել ուշացած օրերի քանակը և իր նկատմամբ կիրառել օրենքով սահմանված տույժը: Դիմումից 2 շաբաթ անց՝ 18.07.2022 թվականին, ՀՀ ոստիկանության պետի տեղակալի պատասխան գրությունով առաջարկում է Մատակարարին պայմանագրային պարտավորությունների՝ 18 աշխատանքային օր, ուշ կատարման համար հաշվարկված 1,366.7 հազ. դրամ տույժը վճարել ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N900005028106 գանձապետական հաշվեհամարին: «Ալիկանտե» ՍՊ ընկերության կողմից հաշվարկված տույժը ամբողջությամբ վճարվել է 08.08.2022 թվականին:

**2)*<u>Հաշվեքննության օբյեկտի արձագանքը</u>*՝**

ՀՀ ոստիկանության կողմից առարկություններ և/կամ որևէ բացատրություններ ու պարզաբանումներ չեն ներկայացվել:

**3)*<u>Հաշվեքննողի մեկնաբանությունը</u>*՝**

---------------------------------------------------

#### 4.4 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ2022/ԲԱՀԱ-2

ՀՀ ոստիկանությունը, սեփական կարիքների համար 11.08.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ 2022/ԲԱՀԱ-2 ծածկագրով հայտարարել է

էլեկտրոնային աճուրդի մասին, որն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով պետք է առաջարկվեր կնքել ՀՀ ոստիկանության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերում մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր): Գնման առարկա է հանդիսանում պատվիրատուի կարիքների համար՝ «ՀՀ ոստիկանության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերում ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ԲԱՀԱ» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «7» չափաբաժնում՝ գլխարկներ, տաբատներ, կոստյումներ, կիսավերարկու, ամենօրյա կոշկեղեն, կիսաճտքավոր կոշիկներ:

25.11.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ԲԱՀԱ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի N2 արձանագրության համաձայն հայտ էր ներկայացրել ութ մասնակից: 30.11.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ԲԱՀԱ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի N3 արձանագրության համաձայն «Քանաքեռ կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն կատարել էր անճշտությունների շտկում, որը հանձնաժողովը գնահատել էր բավարար: Հանձնաժողովի որոշմամբ թվով 7 չափաբաժին ունեցող ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ԲԱՀԱ ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից են ճանաչվել՝ 1-ին չափաբաժնով՝ «Անգա Տրանս» ՍՊԸ-ն, 2-րդ և 5-րդ չափաբաժնով՝ «Քանաքեռ կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, 3-րդ և 4-րդ չափաբաժնով՝ «Մասիսի Գարուն Կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, 6-րդ և 7-րդ չափաբաժնով՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն:

Միևնույն ժամանակ որոշում է կայացվել ընտրված մասնակիցների հետ կնքել հանդերձանքի ձեռքբերում մատակարարման պայմանագրեր՝ համապատասխան չափաբաժիններով: Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 3 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի առթիվ արվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

05.01.2022 թվականին ՀՀ ոստիկանության և «Քանաքեռ կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ 2022/ԲԱՀԱ-2 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է՝ 78,866.9 հազ. դրամ, թվով 2 չափաբաժինների շրջանակներում մատակարարվող տաբատների

ընդհանուր քանակը՝ 4000 հատ՝ 37,555.2 հազ. դրամ արժեքով, կիսավերարկուների ընդհանուր քանակը՝ 3500 հատ՝ 41,311.7 հազ. դրամ արժեքով:

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ 2022/ԲԱՁԱ-2 գնման պայմանագրի 07.03.2022 թվականի N1 Համաձայնագրի համաձայն պայմանագրի գումարից հաստատվել է 69,553.1 հազ. դրամ, որտեղ թվով 2 չափաբաժինների շրջանակներում մատակարարվող տաբատների ընդհանուր քանակը մնացել է նույնը՝ 4000 հատ՝ 37,555.2 հազ. դրամ արժեքով, իսկ կիսավերարկուների ընդհանուր քանակը դարձել է 2711 հատ՝ 31,997.9 հազ. դրամ արժեքով:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ 2022/ԲԱՁԱ-2 գնման պայմանագրի 13.04.2022 թվականի N2 Համաձայնագրի համաձայն պայմանագրի 20 օրվա ընթացքում մատակարարվելիք առաջին խմբաքանակի մատակարարման ժամկետը երկարաձգվել 30 օրացուցային օրով:

15.04.2022 թվականին պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N1 արձանագրության համաձայն մատակարարվել է 4,792.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով թվով 406 հատ կիսավերարկու, 25.05.2022 թվականին պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N2 արձանագրության համաձայն մատակարարվել է 6,397.2 հազ. դրամ ընդհանուր արժեքով թվով 542 հատ կիսավերարկու: Ընդհանուր թվով մատակարարված 978 կիսավերարկուի դիմաց տրվել է վճարման հանձնարարականներ՝ 11,189.2 հազ. դրամ չափով:

**1)Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ**

- Համաձայն պայմանագրի հավելված 2-ի՝ 2-րդ չափաբաժնով 07.03.2022 թվականից սկսված 70 օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 16.05.2022 թվականը նախատեսված է եղել 5,633.3 հազ. դրամ ընդհանուր արժեքի թվով 600 տաբատների մատակարարում, իսկ մինչև 15.06.2022 թվականը՝ 7,511.0 հազ. դրամ ընդհանուր արժեքի թվով 800 տաբատների մատակարարում, սակայն ըստ ՀՀ ոստիկանության ներկայացված փաստաթղթերի, 11.10.2022 թվականի դրությամբ չեն մատակարարվել: Հարկ է նշել նաև, որ պայմանագրի 2.1.7.1 կետի (բ)

ենթակետով հստակեցված չէ վաճառողի կողմից ապրանքի մատակարարման ժամկետները՝ որպես պայմանագրի էական խախտման պայման: Համաձայն պայմանագրի 6.2 կետի վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետի խախտման դեպքում յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.05 տոկոսի չափով: 11.10.2022 թվականի դրությամբ /հաշվեքննության արձանագրության կազմման օր/, 2-րդ չափաբաժնով առաջին կիսամյակում մատակարարման առաջին խմբաքանակով նախատեսված 600 հատ տաբատների մատակարարումների մասով՝ 105, իսկ երկրորդ խմբաքանակով նախատեսված 800 հատ տաբատների մատակարարումների մասով արդեն իսկ բոլորել է շուրջ 83 աշխատանքային օր ուշացում: Քանի որ պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված է առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ, ինչը ՀՀ ոստիկանության կողմից 11.10.2022 թվականի դրությամբ չի ներկայացվել հաշվեքննողներին:

• Համաձայն պայմանագրի հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագրի մատակարարված հանդերձանքի կտորի խտության և բաղադրության ստուգման նպատակով ՀՀ ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել նաև լաբորատոր ստուգման եզրակացություն: Մատակարար կազմակերպության կողմից ներկայացված կտորի փաթեթի վրա առկա պիտակը /կտոր արտադրող ֆաբրիկայի կողմից տրամադրած/, անկախ նրանից, թե ինչպիսի տեղեկատվություն է պարունակում կտորի որակի վերաբերյալ, չի կարող երաշխավորել, որ մատակարարվող վերջնական հանդերձանքի կտորը համապատասխանելու է տեխնիկական բնութագրով հաստատված չափանիշներին: Հարկ է նշել, որ կտորի վրա փակցված պիտակները տրամադրվում են կտոր արտադրողի կողմից, որը տվյալ գործարքի շրջանակներում հանդիսանում է շահագրգիռ կողմ. ըստ այդմ, ՀՀ ոստիկանությունը, այդ տվյալների իսկությունը և համապատասխանությունը տեխնիկական բնութագրերին ճշտելու նպատակով, չի օգտվել պայմանագրով իրեն վերապահված իրավունքից և չի պահանջել լաբորատոր ստուգման եզրակացություն:

**2)*Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*՝**

ՀՀ ոստիկանության կողմից առարկություններ և/կամ որևէ բացատրություններ ու պարզաբանումներ չեն ներկայացվել:

**3)*Հաշվեքննողի մեկնաբանությունը*՝**

----------------------------------------------

### 4.5 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1

ՀՀ ոստիկանությունը, սեփական կարիքների համար 11.11.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8 ծածկագրով հայտարարել է էլեկտրոնային աճուրդի մասին, որն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով պետք է առաջարկվեր կնքել ՀՀ ոստիկանության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերում մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր): Գնման առարկա է հանդիսանում պատվիրատուի կարիքների համար՝ «ՀՀ ոստիկանության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերում ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «6» չափաբաժնում՝ պոլո շապիկներ, վերնաշապիկներ, տաբատներ, կիսավերարկու, կիսաճտքավոր կոշիկներ, ամենօրյա կոշկեղեն:

25.11.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի N2 արձանագրության համաձայն հայտ էր ներկայացրել վեց մասնակից: Հանձնաժողովի որոշմամբ թվով 6 չափաբաժին ունեցող ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից են ճանաչվել՝ 1,2,4-րդ չափաբաժիններով՝ «Մասիսի Գարուն Կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, 5,6-րդ չափաբաժիններով՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն: 3-րդ չափաբաժնով համարվել է չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

Միևնույն ժամանակ որոշում է կայացվել մասնակիցների հետ կնքել հանդերձանքի ձեռքբերման գնման պայմանագիր՝ ընտրված մասնակից ունեցող չափաբաժիններով: Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 2 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից

ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի առթիվ արվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

17.12.2021-ին ՀՀ Ոստիկանության և «Մասիսի Գարուն Կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է՝ 74,078.2 հազ. դրամ, թվով 3 չափաբաժինների շրջանակներում մատակարարվող պոլո շապիկներ ընդհանուր քանակը՝ 4500 հատ՝ 29,332.8 հազ. դրամ արժեքով, վերնաշապիկների ընդհանուր քանակը՝ 3000 հատ՝ 14,651.0 հազ. դրամ արժեքով, կիսավերարկուների ընդհանուր քանակը՝ 1600 հատ՝ 30,094.4 հազ. դրամ արժեքով:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1 գնման պայմանագրի 28.02.2022 թվականի N1 Համաձայնագրի համաձայն պայմանագրի գումարից հաստատվել է 50,916.6 հազ. դրամ, որտեղ թվով 3 չափաբաժինների շրջանակներում եղել է նվազեցումներ՝ մատակարարվող պոլո շապիկներ ընդհանուր քանակը դարձել է՝ 3000 հատ՝ 19,555.2 հազ. դրամ արժեքով, վերնաշապիկների ընդհանուր քանակը՝ 1800 հատ՝ 8,790.6 հազ. դրամ արժեքով, կիսավերարկուների ընդհանուր քանակը՝ 1200 հատ՝ 22,570.8 հազ. դրամ արժեքով:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8-1 գնման պայմանագրի 09.04.2022 թվականի N2 Համաձայնագրի համաձայն պայմանագրի 20 օրվա ընթացքում մատակարարվելիք առաջին խմբաքանակի մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:

16.05.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N1 արձանագրության համաձայն մատակարարվել է 1,629.6 հազ. դրամ ընդհանուր արժեքով թվով 250 հատ պոլո շապիկներ /1,625.5 հազ. դրամ վճարման հանձնարարականով/, 01.06.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N2 արձանագրության համաձայն մատակարարվել է 3,259.2 հազ. դրամ ընդհանուր արժեքով թվով 500 հատ պոլո շապիկներ /3,248.1 հազ. դրամ վճարման հանձնարարականով/: Ընդհանուր թվով մատակարարված 750 պոլո շապիկների դիմաց տրվել է վճարման հանձնարարականներ՝ 4,873.6 հազ. դրամ չափով: Ստացվում է, որ ընդհանուր մատակարարված 4,888.8 հազ. դրամ արժեքով ապրանքի դիմաց վճարվել է 15.2 հազ. դրամ պակաս: Այդ հանգամանքի հետ կապված հարկ է նշել հետևյալը. քանի որ մատակարարումների վերաբերյալ ՀՀ ոստիկանության ներկայացրած 02.06.2022 թվականի Ակտի համաձայն վաճառողը 200 հատ պոլո շապիկ ապրանքատեսակը պետք է մատակարարեր մինչև 08.05.2022 թվականը, սակայն փաստացի մատակարարել է 01.06.2022 թվականին՝ չպահպանելով նախատեսված

մատակարարման ժամկետը 17 աշխատանքային օրով, ուստի արդյունքում յուրաքանչյուր ուշացված օրվա համար չմատակարարված ապրանքի գնի 0.5 տոկոսի չափով պետք է գանձվեր 11.1 հազ. դրամ՝ 200*6518.4*0.05*17/100:

**1)Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ**

- Համաձայն պայմանագրի հավելված 2-ի՝ 2-րդ և 4-րդ չափաբաժնով 28.02.2022 թվականից սկսված 70 օրվա ընթացքում, այսինքն մինչև 09.05.2022 թվականը, նախատեսված է եղել 1,318.6 հազ. դրամ ընդհանուր արժեքի թվով 270 վերնաշապիկների և 3,385.6 հազ. դրամ ընդհանուր արժեքի թվով 180 կիսավերարկուների մատակարարում, իսկ մինչև 08.06.2022 թվականը՝ 1,758.1 հազ. դրամ ընդհանուր արժեքի թվով 360 վերնաշապիկների և 4,514.2 հազ. դրամ ընդհանուր արժեքի թվով 240 կիսավերարկուների մատակարարում, սակայն, ըստ ՀՀ ոստիկանության ներկայացված փաստաթղթերի 11.10.2022 թվականի դրությամբ չեն մատակարարվել: Համաձայն պայմանագրի 6.2 կետի վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետի չպահպանման դեպքում յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.05 տոկոսի չափով: 11.10.2022 թվականի դրությամբ /հաշվեքննության արձանագրության կազմման օր/, 2-րդ և 4-րդ չափաբաժիններով առաջին կիսամյակում նախատեսված առաջին խմբաքանակով մատակարարումների մասով ուշացումների օրերը կազմում են՝ 109, իսկ երկրորդ խմբաքանակով մատակարարումների մասով՝ 88 աշխատանքային օր: Հարկ է նշել նաև, որ պայմանագրի 2.1.7.1 կետի (բ) ենթակետով հստակեցված չէ վաճառողի կողմից ապրանքի մատակարարման ժամկետները՝ որպես պայմանագրի էական խախտման պայման:
- Քանի որ պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված է առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ, ինչը ՀՀ ոստիկանության կողմից 11.10.2022 թվականի դրությամբ չի ներկայացվել հաշվեքննողներին:
- Համաձայն պայմանագրի հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագրի մատակարարված հանդերձանքի կտորի խտության և բաղադրության ստուգման նպատակով ՀՀ ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել նաև լաբորատոր ստուգման եզրակացություն: Մատակարար

կազմակերպության կողմից ներկայացված կտորի փաթեթի վրա առկա պիտակը /կտոր արտադրող ֆաբրիկայի կողմից տրամադրած/, անկախ նրանից, թե ինչպիսի տեղեկատվություն է պարունակում կտորի որակի վերաբերյալ, չի կարող երաշխավորել, որ մատակարարվող վերջնական հանդերձանքի կտորը համապատասխանելու է տեխնիկական բնութագրով հաստատված չափանիշներին: Հարկ է նշել, որ կտորի վրա փակցված պիտակները տրամադրվում են կտոր արտադրողի կողմից, որը տվյալ գործարքի շրջանակներում հանդիսանում է շահագրգիռ կողմ. ըստ այդմ, ՀՀ ոստիկանությունը, այդ տվյալների իսկությունը և համապատասխանությունը տեխնիկական բնութագրերին ճշտելու նպատակով, չի օգտվել պայմանագրով իրեն վերապահված իրավունքից և չի պահանջել լաբորատոր ստուգման եզրակացություն:

**2)*Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*'**
ՀՀ ոստիկանության կողմից առարկություններ և/կամ որևէ բացատրություններ ու պարզաբանումներ չեն ներկայացվել:
**3)*Հաշվեքննողի մեկնաբանությունը*'**

-------------------------------------------------

### 4.6 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ-1

ՀՀ ոստիկանությունը, սեփական կարիքների համար 08.11.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ-1 ծածկագրով հայտարարել է էլեկտրոնային աճուրդի մասին, որն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով պետք է առաջարկվեր կնքել ՀՀ ոստիկանության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերում մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր): Գնման առարկա է հանդիսանում պատվիրատուի կարիքների համար՝ «ՀՀ ոստիկանության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերում ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ-1» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում՝ կոստյումներ:

25.11.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏՎ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի հայտերի բացման նիստի N2 արձանագրության համաձայն հայտ էր ներկայացրել երեք մասնակից:

30.11.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏԿ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի N3 արձանագրության համաձայն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏԿ ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն:

Միևնույն ժամանակ որոշում է կայացվել «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հետ կնքել հանդերձանքի ձեռքբերման գնման պայմանագիր:

Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 3 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի առթիվ արվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

17.12.2021 թվականին ՀՀ Ոստիկանության և «Տեքսուորլդ» ՍՊԸ միջև կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏԿ-1 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է՝ 98,728.1 հազ. դրամ, թվով 1 չափաբաժնի շրջանակներում մատակարարվող կոստյումների ընդհանուր քանակը՝ 4000 հատ:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-7-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-2022/ՏԿ-1 գնման պայմանագրի 01.03.2022 թվականի N1 Համաձայնագրով հաստատվել է պայմանագրով սահմանված 98,728.1 հազ. դրամը, որի վճարումը կիրականացվի համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի համապատասխան:

28.03.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N1 արձանագրության համաձայն մատակարարվել է 14,809.2 հազ. դրամ ընդհանուր արժեքով թվով 600 հատ կոստյում, 20.06.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N2 արձանագրության համաձայն մատակարարվել է 7,404.6 հազ. դրամ ընդհանուր արժեքով թվով 300 հատ կոստյում: Ընդհանուր թվով մատակարարված 900 կոստյումի դիմաց տրվել է վճարման հանձնարարականներ՝ 22,213.8 հազ. դրամ չափով:

**1)Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ**

• Ըստ ՀՀ ոստիկանության ներկայացված փաստաթղթերի, պայմանագրի համաձայն կոստյումների մատակարարման երկրորդ խմբաքանակը՝ քանակով 800 հատ, պետք է մատակարարվեր համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց՝ 01.03.2022

թվականից, հետո 20 օրացուցային օր հետո՝ 80-օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 09.06.2022 թվականը /գումարային 100 օրում/: 800-ից 300 հատը մատակարարվել է 20.06.2022 թվականին՝ 8 աշխատանքային օր ուշացումով, սակայն տույժ չի հաշվարկվել /համաձայն պայմանագրի 6.2 կետի ուշացրած 8 աշխատանքային օրվա համար տույժի գումարը կկազմեր 29.6 հազ. դրամ/, իսկ մնացած 500 հատը՝ 12,341.0 հազ. դրամ արժեքով, 11.10.2022 թվականի /հաշվեքննության արձանագրության կազմման օր/ դրությամբ չի մատակարարվել և այդ օրվա դրությամբ առաջին կիսամյակում նախատեսված մատակարարումների մասով ուշացումները կազմում են շուրջ 87 աշխատանքային օր: Հարկ է նշել նաև, որ համաձայն պայմանագրի 2.1.7.1 կետի (բ) ենթակետի վաճառողը էական խախտել է պայմանագիրը՝ չի պահպանվել ապրանքի մատակարարման ժամկետները 15 օրից ավելի, որի արդյունքում համաձայն պայմանագրի 2.1.7 կետի ՀՀ ոստիկանությունն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/:

- Քանի որ պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված է առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ, ինչը ՀՀ ոստիկանության կողմից դեռևս չի ներկայացվել հաշվեքննողներին:
- Համաձայն պայմանագրի հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագրի մատակարարված հանդերձանքի կտորի խտության և բաղադրության ստուգման նպատակով ՀՀ ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել նաև լաբորատոր ստուգման եզրակացություն: Մատակարար կազմակերպության կողմից ներկայացված կտորի փաթեթի վրա առկա պիտակը /կտոր արտադրող ֆաբրիկայի կողմից տրամադրած/, անկախ նրանից, թե ինչպիսի տեղեկատվություն է պարունակում կտորի որակի վերաբերյալ, չի կարող երաշխավորել, որ մատակարարվող վերջնական հանդերձանքի կտորը համապատասխանելու է տեխնիկական բնութագրով հաստատված չափանիշներին: Հարկ է նշել, որ կտորի վրա փակցված պիտակները տրամադրվում են կտոր արտադրողի կողմից, որը տվյալ գործարքի շրջանակներում հանդիսանում է շահագրգիռ կողմ. ըստ այդմ, ՀՀ ոստիկանությունը, այդ տվյալների իսկությունը և համապատասխանությունը տեխնիկական բնութագրերին ճշտելու նպատակով, չի օգտվել պայմանագրով իրեն վերապահված իրավունքից և չի պահանջել լաբորատոր ստուգման եզրակացություն:

**2)*Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*՝**

ՀՀ ոստիկանության կողմից առարկություններ և/կամ որևէ բացատրություններ ու պարզաբանումներ չեն ներկայացվել:

**3)*Հաշվեքննողի մեկնաբանությունը*՝**

---------------------------------------------

## 4.7 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա45-1

ՀՀ ոստիկանությունը, սեփական կարիքների համար 27.12.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա45 ծածկագրով հայտարարել է էլեկտրոնային աճուրդի մասին, որն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով պետք է առաջարկվեր կնքել ՀՀ ոստիկանության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերում մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր): Գնման առարկա է հանդիսանում պատվիրատուի կարիքների համար՝ «ՀՀ ոստիկանության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերում ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա45» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում՝ կոստյումներ:

11.01.2022 թվականին ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա45 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի N2 արձանագրության համաձայն հայտ էր ներկայացրել երեք մասնակից: Հանձնաժողովի որոշմամբ թվով 1 չափաբաժին ունեցող ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա45 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

Միևնույն ժամանակ որոշում է կայացվել Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի հետ կնքել հանդերձանքի ձեռքբերման գնման պայմանագիր: Գնահատող հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 12-ի թիվ 2 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի առթիվ արվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

27.01.2022 թվականին ՀՀ Ոստիկանության և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա45-1 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է՝ 47,013.6 հազ. դրամ,

թվով 1 չափաբաժնի շրջանակներում մատակարարվող կոստյումների ընդհանուր քանակը՝ 1900 հատ:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա45-1 գնման պայմանագրի 28.04.2022 թվականի N1 Համաձայնագրով հաստատվել է պայմանագրով սահմանված 47,013.6 հազ. դրամը, որի վճարումը կիրականացվի համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի համապատասխան, ինչպես նաև փոխվել է գնորդի ՀՎՀՀ-ն:

26.05.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N1 արձանագրության համաձայն մատակարարվել է 5,443.7 հազ. դրամ ընդհանուր արժեքով թվով 220 հատ կոստյում, 09.06.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N2 արձանագրության համաձայն մատակարարվել է 9,650.2 հազ. դրամ ընդհանուր արժեքով թվով 390 հատ կոստյում, 17.06.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N3 արձանագրության համաձայն մատակարարվել է 12,866.9 հազ. դրամ ընդհանուր արժեքով թվով 520 հատ կոստյում, 30.06.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N4 արձանագրության համաձայն մատակարարվել է 2,969.3 հազ. դրամ ընդհանուր արժեքով թվով 120 հատ կոստյում: 30,930.0 հազ. դրամ արժեքի չափով ընդհանուր թվով մատակարարված 1250 կոստյումների դիմաց տրվել է 21,774.7 հազ. դրամի վճարման հանձնարարականներ:

Մատակարարի կողմից մատակարարման ժամկետի չպահպանման փաստերի առումով ոստիկանության կողմից ներկայացվել է տեղեկանք, որտեղ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հիշյալ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվել է 26.05.2022 թվականին, իսկ պայմանագրի 8.1 կետի 2-րդ պարբերության համաձայն պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը, հետևաբար մատակարարը իր պարտականությունները պետք է կատարեր 26.05.2022 թվականից հետո, բայց ոչ ուշ քան 20.12.2022 թվականը: Ուստի նույն պայմանագրի 7-րդ կետի համաձայն վերջինս ենթակա չէ պատասխանատվության:

**1)Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ**

• Ըստ ներկայացված փաստաթղթերի ՀՀ ոստիկանությունը ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա45-1 ծածկագրով գնման N1 համաձայնագրի

նախագիծը մատակարարին է ծանուցել 05.04.2022 թվականին, որը ինչպես պահանջում է օրենսդրությունը /ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի 526-Ն որոշման N1 Հավելվածի 33-րդ կետի 12-րդ ենթակետ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի երկրորդ մաս/ պետք է հաստատվեր վերջինիս կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն հաստատվել է 18 աշխատանքային օրում՝ 28.04.2022 թվականին: Ինչը ենթադրում է, որ պայմանագիրը պատվիրատուի կողմից պետք է միակողմանիորեն լուծվեր:

• Պայմանագրով նախատեսված է մատակարարման ժամկետը հաշվել Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո, ինչը ենթադրում է, որ կողմերի ստորագրման պահից՝ 28.04.2022 թվականից /«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» 441 հոդվածի առաջին մաս/, ինչպես նաև գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Հետևաբար՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը ընդունել պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառման պահը՝ 26.05.2022 թվականը, իրավական հիմնավորում չունի:

• Քանի որ պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված է առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ, ինչը 11.10.2022 թվականի դրությամբ /հաշվեքննության իրականացման օր/ ՀՀ ոստիկանության կողմից դեռևս չի ներկայացվել հաշվեքննողներին:

• Համաձայն պայմանագրի հավելված 1-ով հաստատված Տեխնիկական բնութագրի մատակարարված հանդերձանքի կտորի խտության և բաղադրության ստուգման նպատակով ՀՀ Ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել նաև լաբորատոր ստուգման եզրակացություն: Մատակարար կազմակերպության կողմից ներկայացված կտորի փաթեթի վրա առկա պիտակը /կտոր արտադրող ֆաբրիկայի կողմից տրամադրած/, անկախ նրանից, թե ինչպիսի տեղեկատվություն է պարունակում կտորի որակի վերաբերյալ, չի կարող երաշխավորել, որ մատակարարվող վերջնական հանդերձանքի կտորը համապատասխանելու է տեխնիկական բնութագրով հաստատված չափանիշներին: Հարկ է նշել, որ կտորի վրա փակցված պիտակները տրամադրվում են կտոր արտադրողի կողմից, որը տվյալ գործարքի շրջանակներում հանդիսանում է շահագրգիռ կողմ. ըստ այդմ, ՀՀ ոստիկանությունը, այդ տվյալների իսկությունը և համապատասխանությունը տեխնիկական բնութագրերին ճշտելու նպատակով, չի

օգտվել պայմանագրով իրեն վերապահված իրավունքից և չի պահանջել լաբորատոր ստուգման եզրակացություն:

**2)*Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*՝**

ՀՀ Ո ԷԼԾԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/Ա45-1 ծածկագրով պայմանագրի համաձայնագիր 1-ի նախագիծը մասնակցին /Վաճառող/ ծանուցվել 05.04.2022 թվականի ժ. 16:38-ին և առաջարկվել է կնքել այն: ՀՀ Կառավարության 526-ն որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ այն է. «... Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է.» մասնակիցը արդեն իր կողմից հաստատված համաձայնագիրը ուղարկման ժամից հաշվարկված 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է ՀՀ ոստիկանություն /այսուհետ Գնորդ/, իսկ Գնորդը ՀՀ Կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ այն է. «13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր,և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.» իրավունք ունի իր կողմից վավերացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: Այսինքն՝ եթե վերը նշված կետը չի վերաբերվում Պատվիրատուի կողմից համաձայնագիրը վավերացնելու ժամկետին, ապա հարկ եմ համարում նշել, որ դա օրենսդրական բաց է և Պատվիրատուն ողջամիտ ժամկետում (այս դեպքում 2 աշխատանքային օրվա ընթացքում) վավերացրել է այն:Հավելեմ նաև, որ մասնակիցը 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է Գնորդին իր կողմից հաստատված նախագիծը, իսկ Գնորդը համաձայնագիր ստանալուն հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել է իր կողմից, ուստի հարկ եմ համարում նշել, որ վերը նշված ժամկետներում անհամապատասխանություններ չկան:

**3)*Հաշվեքննողի մեկնաբանությունը*՝**

ՀՀ Կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի 13-րդ ենթակետի և 33-րդ կետի 12-րդ ենթակետի վերաբերյալ օրենսդիր մարմնի սահմանած նորմերը հստակ

են և իմպերատիվ, տարընկալման տեղիք չեն տալիս, քանի որ պայմանագրի նախագիծը հաստատած ընտրված մասնակիցը և համաձայնագիրը ստորագրած պայմանագրի կողմը չեն կարող իրավական տեսանկյունից միանշանակ նույնականացվել: Այսինքն, այն հիմնավորումը, որ վերը նշված նորմերը մասամբ վերաբերվում են միևնույն իրավիճակի կարգավորմանը, չի ընդունվում:

-----------------------------------------------

## 4.8 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ37ՌԱԴԻՈՑԱՆՑ/2022/ԿՏՏՎ1

ՀՀ ոստիկանությունը, սեփական կարիքների համար 22.12.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ37ՌԱԴԻՈՑԱՆՑ/2022/ԿՏՏՎ ծածկագրով հայտարարել է էլեկտրոնային աճուրդի մասին, որն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով պետք է առաջարկվեր կնքել ՀՀ ոստիկանության կարիքների համար ռադիո ցանցի ձեռքբերում ծառայության մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր): Գնման առարկա է հանդիսանում պատվիրատուի կարիքների համար՝ «ՀՀ ոստիկանության կարիքների համար ռադիո ցանցի ձեռքբերում ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-37-ՌԱԴԻՈՑԱՆՑ/2022/ԿՏՏՎ» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում՝ ռադիո ցանց:

12.01.2021 թվականին ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ37ՌԱԴԻՈՑԱՆՑ/2022/ԿՏՏՎ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի N2 արձանագրության համաձայն հայտ էր ներկայացրել մեկ մասնակից: Հանձնաժողովի որոշմամբ թվով 1 չափաբաժին ունեցող ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ37ՌԱԴԻՈՑԱՆՑ/2022/ԿՏՏՎ ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Տոպազ – 95» ՍՊԸ-ն:

Միևնույն ժամանակ որոշում է կայացվել մասնակցի հետ կնքել ռադիո ցանցի ձեռքբերման գնման պայմանագիր: Գնահատող հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 13-ի թիվ 2 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ իրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի առթիվ արվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

24.01.2022 թվականին կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ37ՌԱԴԻՈՑԱՆՑ/2022/ԿՏՏՎ-1 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է՝ 613,780.2

հազ. դրամ /ներառյալ ԱԱՀ/, թվով 1 չափաբաժնի շրջանակներում մատուցվող ռադիո ցանցի ձեռքբերում ծառայության դիմաց:

ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ37ՌԱԴԻՈՑԱՆՑ/2022/ԿՏՏԿ-1 գնման պայմանագրի 13.04.2022 թվականի N1 Համաձայնագրի համաձայն փոխարինվել է պայմանագրի հաշվեհամարը, ինչպես նաև հաստատվել է պայմանագրով սահմանված 613,780.2 հազ. դրամը /ներառյալ ԱԱՀ/, որի վճարումը կիրականացվի համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի համապատասխան:

31.05.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N1 արձանագրության համաձայն մատուցվել է 613,780.2 հազ. դրամ ընդհանուր արժեքով ծառայություններ: Ընդհանուր թվով մատակարարված ծառայությունների դիմաց տրվել է վճարման հանձնարարական՝ 613,780.2 հազ. դրամի չափով:

**1)Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ**

• Հաշվեքննող խմբի կողմից պահանջվել են նախահաշվային գնի /գնման գնի/ ձևավորման համար անհրաժեշտ գնահարցման կամ այլ եղանակով ստացված արդյունքների փաստաթղթերը, սակայն հաշվեքննող խմբին 11.10.2022 թվականի դրությամբ /հաշվեքննության իրականացման օր/ չեն ներկայացվել:

Պայմանագիրը ենթադրում է ինչպես սարքերի, սարքավորումների, տեխնիկական միջոցների ձեռք բերում, այնպես էլ վերջիններիս տեղադրում, մոնտաժում, և ծրագրային աշխատանքներ: ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի 526-Ն որոշման N1 Հավելվածի 23-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջի վրա, այն է. «գնման ընթացակարգը, որպես ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերում որակելու համար հաշվի է առնվում կնքվելիք պայմանագրի գնի մեջ դրանցից որևէ մեկի մեծ տեսակարար կշիռ ունենալու հանգամանքը, բացառությամբ շինարարական աշխատանքների»: Այս առումով, ինչպես մրցույթի հրավերում, այնպես էլ պայմանագրում պարտադիր էր հստակ տարանջատել գնման առարկայում ապրանքների և մատուցվող ծառայությունների արժեքները և տեսակարար կշիռը: Հստակ տարանջատումը բացակայում է ինչպես պայմանագրում, այնպես էլ հարկային հաշվում, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման արձանագրության մեջ, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ Ակտում, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացությունում: Ավելին, սույն պայմանագրով կարգավորված չէ նաև ձեռք բերվող նյութական միջոցների հանձման - ընդունման, սեփականության իրավունքների փոխանցման առանձնահատկությունները և կարգը:

Այս ամենի արդյունքում հնարավոր չէր կարող լինել հաշվապահորեն ձևակերպել նյութական միջոցների մուտքը պահեստ և վերջինիս հետագա բաշխումը, ըստ նշանակության՝ իրենց համապատասխան արժեքներով, ինչը որ փաստացի չի կատարվել: Արդյունքում ստացվում է, որ ծառայություններ մատուցող ընկերությունը միայն ծառայություններ է մատուցելու, և պայմանագրի ժամկետի ավարտից հետո կարող է հետ պահանջել ծառայության մատուցման ընթացքում կիրառվող սարքերն ու սարքավորումները, տեխնիկական միջոցները: Սարքերի և սարքավորումների հաշվապահական ձևակերպումների առումով չեն պահպանվել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածի պահանջները: Նման իրավիճակում խնդիրներ կարող են ծագել ձեռք բերված նյութական միջոցների հաշվապահության հաշվառման ստանդարտներին համապատասխան գույքագրման, վնասված գույքի հատուցման, դուրս գրման, մաշվածության հաշվարկման և այլ գործընթացներում:

**2)*Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*՝**

ՀՀ ոստիկանության կողմից առարկություններ և/կամ որևէ բացատրություններ ու պարզաբանումներ չեն ներկայացվել:

**3)*Հաշվեքննողի մեկնաբանությունը*՝**

---------------------------------------------------

## 4.9 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԾՁԲ-2022-ԱՎՎ/ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՆՈՒՄ

ՀՀ ոստիկանության և Այ Թի Սոլութիոն ՍՊԸ-ի միջև 07.03.2022 թվականին կնքվել է ԲՄԾՁԲ-2022-ԱՎՎ/Ծրագրային գնման պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 60,000.0 հազ. դրամ: Պայմանագրով նախատեսվել է ՀՀ ԱՎՎ ստորաբաժանումներում և ՀՀ ԱԳՆ հյուպատոսական ծառայություններում տեղակայված կենսաչափական անձնագրերի հայտերի ընդունման կայանների, ԱՎՎ վարչական շենքում, ՀՀ ԱԳՆ և ՀՀ ոստիկանության շենքերում գործող կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի սպասարկում՝ համաձայն տեխնիկական բնութագրի:

**1)Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ**

**1.** 06.04.2022 թվականին կնքված N1 համաձայնագրին կից N1 հավելվածով սահմանվել է մատուցվող ծառայությունների դիմաց վճարման ժամանակացույցը: Համաձայն ժամանակացույցի՝ 12,000.0 հազ. դրամ, վճարում է նախատեսվել նաև մարտ ամսվա համար: Այսինքն՝ վճարումը նախատեսվել է համաձայնագիրը կնքելուն նախորդող ժամանակահատվածի համար: ԲՄԾՁԲ-2022-ԱՎՎ/Ծրագրային գնման պայմանագրի հավելված N1-ում ևս նշված է, որ Ծառայության մատուցումը պետք է իրականացվի համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, ինչը ևս բացառում է նախքան Համաձայնագրի կնքումը ծառայության մատուցումը և դրա համար վճարման նախատեսումը:

**2.** Պայմանագրի տեխնիկական բնութագրում նշված չեն առանձին ծառայությունների արժեքները, ինչն անհնարին է դարձնում որոշակի ժամանակահատվածում մատուցված ծառայությունների հստակ արժեքի հաշվարկումը և դրա հիման վրա հանձնման-ընդունման ակտերում վճարվելիք գումարների հստակեցումը: Ստացվում է, որ ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է կամայական բաշխվածքով: Այս հանգամանքը առաջացնում է նաև որոշակի ռիսկեր որոշակի ժամանակաշրջանում վճարված գումարի դիմաց անհամեմատ ավելի պակաս արժեքով ծառայություններ մատուցելու կամ դրա հակառակ դրսևորումը առաջանալու հետ կապված:

N 01 և N 02 հանձնման-ընդունման արձանագրություններում մատուցված ծառայությունների տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը, այն է՝ «ՀՀ ոստ. ԱՎՎ ստորաբաժանումներում և ՀՀ ԱԳՆ հյուպատոսական ծառայություններում տեղակայված կենսաչափական անձնագրերի հայտերի ընդունման կայանների, ԱՎՎ վարչական շենքում, ՀՀ ԱԳՆ և ոստիկանության շենքերում գործող կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի սպասարկում» և այդ ծառայությունների համար վճարվելիք գումարները ներկայացված են մեկ տողով: Այս հանգամանքն անհնարին է դարձնում մատուցված ծառայությունների ծավալը և արժեքը հասկանալը: Բացի պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտերը և հանձնման-ընդունման արձանագրությունները կողմերի միջև կնքվել են նաև կատարված աշխատանքների փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտեր, որտեղ թեև ներկայացված են կատարված աշխատանքները առանձին տողերով, սակայն դրանց գները այստեղ ևս բացակայում են: Բացի այդ, կատարված աշխատանքների փաստը ֆիքսելու վերաբերյալ Ն 01/22 և Ն 02/22 ակտերում նշված աշխատանքները մեծամասամբ համընկնում են, սակայն 11.04.2022 թվականին կնքված Ն 01 արձանագրությամբ վճարման ենթակա գումարը կազմել է 12,000.0 հազ. դրամ, իսկ 08.06.2022 թվականին կնքված Ն 02 արձանագրությամբ՝ 10,000.0 հազ. դրամ: Այս պարագայում պարզ չէ թե երկու

արձանագրություններում նշված գումարների միջև 2,000.0 հազ. դրամ գումարի տարբերությունը ինչ հաշվարկների վրա է իրականացվել:

Նշենք նաև, որ կատարված աշխատանքների փաստը ֆիքսելու վերաբերյալ Ն 01/22 ակտում նշված է, որ 07.03.2022 թվականից մինչև 31.03.2022 թվականն ընկած ժամանակահատվածում Կատարողը մատուցել է որոշակի աշխատանքներ, որի հիման վրա 11.04.2022 թվականին կնքվել է Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ Ն-01 արձանագրությունը, որտեղ մատուցված ծառայությունները ներկայացված են մեկ տողով: Ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ համաձայնագիրը կնքվել է նշված ծառայությունների մատուցման վերաբերյալ ակտում նշված ժամանակահատվածից ավելի ուշ՝ 06.04.2022 թվականին:

**3**. Պայմանագրի տեխնիկական բնութագրում (տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը՝ ՀՀ ոստ. ԱՎՎ ստորաբաժանումներում և ՀՀ ԱԳՆ հյուպատոսական ծառայություններում տեղակայված կենսաչափական անձնագրերի հայտերի ընդունման կայանների, ԱՎՎ վարչական շենքում, ՀՀ ԱԳՆ և ոստիկանության շենքերում գործող կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի սպասարկում) նշված է, որ պետք է իրականացվի հաճախ հանդիպող խնդիրների դասակարգում և պարբերական կտրվածքով օգտագործողների ձեռնարկների թարմացում: Ներկայացված պարզաբանման համաձայն՝ հաշվեքննության իրականցման պահի դրությամբ ձեռնարկների թարմացումներ չեն կատարվել:

Այսպիսով բոլոր մատուցված ծառայությունները ներկայացված են որպես մեկ միավոր և պարզ չէ, թե որ ծառայյությունը քանի անգամ է մատուցվել և հատկապես ինչքան է որևէ մեկի մատուցման արժեքը:

**2)*Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*՝**

ՀՀ ոստիկանության կողմից առարկություններ և/կամ որևէ բացատրություններ ու պարզաբանումներ չեն ներկայացվել:

**3)*Հաշվեքննողի մեկնաբանությունը*՝**

---------------------------------------------------

## 4.10 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՎԱՌԵԼԻՔ-6-1

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-վառելիք-6-1: ՀՀ ոստիկանության (այսուհետ գնորդ) և «Սիփիէս Օիլ» ՍՊԸ (այսուհետ վաճառող) միջև 2021 թվականի դեկտեմբերի 13-ին կնքվել է պայմանագիր, ըստ որի՝ պետք է մատակարարվեր 200.000 լիտր ռեգուլյար և 825.000 լիտր պրեմիում դասի բենզին: Պայմանագրով մատակարարվող ապրանքի ընդհանուր գինը ներառյալ ԱԱՀ կազմել է 477,750 հազ. դրամ:

18.02.2022 թվականին կնքված Համաձայնագիր 1-ով նախատեսված գումարից հաստատվել է 449,680.1 հազ. դրամը, ինչպես նաև մատակարարման և վճարման ժամանակացույցը:

Համաձայն 07.03.2022 թվականին կազմված հանձման-ընդունման N1 արձանագրության փաստացի մատակարարվել է 207.000 լիտր պրեմիում /մատակարարումը կտրոնային/ և 50.000 լիտր ռեգուլյար բենզին /մատակարարումը բաքային/՝ 119,790.0 հազ. դրամ արժեքով, որի դիմաց 18.03.2022 թվականին վճարվել է 112,420.0 հազ. դրամ: Իսկ 05.04.2022 թվականին վճարվել է մնացած 7,370.0 հազ. դրամը: Համաձայն 06.04.2022 թվականին կազմված հանձման-ընդունման N2 արձանագրության փաստացի մատակարարվել է 206.000 լիտր պրեմիում /մատակարարումը կտրոնային/ և 50.000 լիտր ռեգուլյար բենզին /մատակարարումը բաքային/՝ 119,790.0 հազ. արժեքով, որի դիմաց 11.04.2022 թվականին վճարվել է 105,050.0 հազ. դրամ:

**1)*Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ.***

1. Հաշվեքննող խմբին ներկայացված տեղեկատվության համաձայն, վերը նշված պայմանագրով մատակարարված բենզինը լաբորատոր փորձարկման չի ենթարկվել, ինչպես նաև առկա չեն ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2. Պայմանագրերի Հավելված 1-ում արտացոլված տեխնիկական բնութագրի համաձայն մատակարարվող բենզինի ֆիզիկաքիմիական ցուցանիշները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը համապատասխանում են ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի» պահանջներին, սակայն մի շարք ցուցանիշներով չեն համապատասխանում Մաքսային միության երկրների համար գործող ТР ТС 013/2011 տեխնիկական կանոնակարգի պահանջներին: Հարկ է նշել, նաև, որ 14.01.2022 թ-ին վերը նշված ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1952-Ն որոշումը ուժը կորցրած է ճանաչվել:

3. «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-վառելիք-6-1» պայմանագրի մեջ բաքային տարբերակով մատակարարվող բենզինի մասով նախատեսված չէ վերջինս

հետագայում ի պահ հանձնել մատակարարին, ինչպես նաև առկա չէ այլ պայմանագիր կամ համաձայնագիր, որը կկարգավորեր ի պահ հանձնելու և հետագա մատակարարման գործընթացը: Բացի այդ, հետագայում այդ բենզինը 3800 լիտր տարողությամբ բենզատարով ոստիկանության կոնկրետ ստորաբաժանումներ առաքելու գործընթացում առկա են մի շարք հարցեր՝ բենզատարի տարողությունը ժամանակի ընթացքում ստուգաչափվել է, թե ոչ, ինչպես նաև բենզատարի լիցքավորման ժամանակ բենզինի կոնկրետ ջերմաստիճանի ստուգում արվել է, թե ոչ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ջերմաստիճանից խիստ կախված է վառելիքի խտությունը: Վերջիններիս վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում հիմնավորումներ առկա չեն, չնայած ըստ տրամադրված տեղեկանքի, լիցքավորումն իրականացվել է առավոտյան ժամերին, որը խիստ հարաբերական փաստարկ է ջերմաստիճանի առումով:

4. «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-վառելիք-6-1» պայմանագրում, տուժանքի մասին համաձայնագրում, վճարման պահանջագրում գնորդ և պատվիրատու հանդիսացող ՀՀ ոստիկանության փոխարեն գրված է ՀՀ ԿԱ ոստիկանություն, ինչը չի համապատասխանում «Պետական կառավարման համակարգի մարմինների» մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2) կետով և 9-րդ հոդվածի 3-րդ մասի 7) կետով սահմանվածին: Ավելին, մրցույթի հրավերով սահմանված վճարման պահանջագրում արտացոլված շահառուի ՀՎՀՀ-ն /01569613/ պատկանում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը, որը որևէ առնչություն չունի տվյալ ընթացակարգի հետ:

Պայմանագրերի տեխնիկական բնութագրերում առկա են վրիպակներ, օրինակ՝ բենզինի խտության չափման ժամանակ վերջինիս ջերմաստիճանը՝ 15° C փոխարեն նշված է 150° C: «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-վառելիք-6-1» պայմանագրում բաքային տարբերակով մատակարարվող բենզինի գնման տեխնիկական բնութագրում նշված են նաև այնպիսի պայմաններ, որոնք հատկանշական պետք է լինեն կտրոնով մատակարարվող բենզինի պարագայում՝ խոսքը վերաբերվում է թողարկվող կտրոնների սպասարկման պայմանին:

**2)*Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*՝**

ՀՀ ոստիկանության կողմից առարկություններ և/կամ որևէ բացատրություններ ու պարզաբանումներ չեն ներկայացվել:

**3)*Հաշվեքննողի մեկնաբանությունը*՝**

-----------------------------------------------

# 5 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ Ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցների հաշվառման վկայականների և վարորդական վկայականների տրամադրման հետ կապված գործընթացում, 2022 թվականի առաջին կիսամյակում, առաջացել են մի շարք խնդիրներ: Մասնավորապես մամուլի բազմաթիվ հրապարակումներից[2] ակնհայտ է դարձել, որ 2022 թվականի առաջին կիսամյակում վարորդական վկայականների փոխարեն քաղաքացիներին տրվել են ժամանակավոր տեղեկանքներ, որոնք գործել են միայն ՀՀ տարածքում: Ըստ ոստիկանության պատասխանատու ստորաբաժանման պարզաբանման՝ քաղաքացիներին վկայականներ չտրամադրելու պատճառ են հանդիսացել տվյալ վկայականները տպագրելու համար պահանջվող բաղադրիչներից որևէ մեկի ուշ մատակարարումը կամ մատակարար ընկերություններից որևէ մեկի թերացումը:

ՀՀ Ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայականների տպագրման համար անհրաժեշտ բաղադրիչների ձեռքբերման նպատակով Ոստիկանության կնքած պայմանագրերը՝ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի հետ՝ վարորդական վկայականների տպագրման համար նախատեսված պլաստիկ քարտերի ձեռք բերման նպատակով, «Տեխսոմարտ» ՍՊԸ-ի հետ՝ վարորդական վկայականների և տեխանձնագրերի տպագրման համար նախատեսված (L-1) պաշտպանիչ թաղանթների ձեռք բերման նպատակով, «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ի հետ՝ վարորդական վկայականների և տեխանձնագրերի տպագրման համար նախատեսված ներկող ժապավենների և թափանցիկ պաշտպանիչ թաղանթների ձեռք բերման նպատակով և մի քանի այլ կազմակերպությունների հետ՝ տպագրման համար անհրաժեշտ այլ բաղադրիչների ձեռք բերման նպատակով:

Հաշվեքննության ընթացքում արձանագրվել է, որ բոլոր վերը նշված բաղադրիչները օգտագործվում են միայն մեկ մոդելի տպիչ սարքի մեջ՝ ZEBRA մակնիշի, այսինքն՝ պլաստիկ քարտերը, բոլոր ներկող ժապավենները և պաշտպանիչ թաղանթները տեղադրվում են մեկ տպիչ սարքի մեջ, ինչից էլ ձևավորվում է վերջնական արդյունքը՝ վարորդական վկայականը կամ հաշվառման վկայականը: Հետևաբար՝ վկայականների տպագրության համար նախատեսված բաղադրիչներից որևէ մեկի մասով մրցույթի չկայանալու կամ ոչ պատշաճ որակի

[2] https://youtu.be/_nMHj6yRDd0 , https://yerevan.today/mamuli-tesutyun/99248/varordakan-iravounqi-vkayakani-poxaren-plastik-qart-%C2%ABjoghovourd%C2%BB , https://news.am/arm/news/696784.html , https://oragir.news/hy/material/2022/03/08/34121 , https://lurer.com/?p=454710&l=am

ապրանք մատակարարելու կամ մատակարարումը ուշացնելու դեպքում շահառուները զրկվում են ժամանակին պատշաճ որակի սպասարկումից:

Նմանատիպ խնդիրներից հետագայում խուսափելու լուծում կարող է հանդիսանալ վկայականների տպագրության համար պահանջվող բաղադրիչների խմբավորումը մեկ չափաբաժնի մեջ, քանի որ Ոստիկանությանը, որպես արդյունք, անհրաժեշտ է ձեռք բերել օգտագործման համար պատրաստի վկայականներ: Եվ այս դեպքում ընտրված մատակարարը պատասխանատու կլինի արդյունքի որակի և ժամանակին մատակարարման համար՝ ամբողջական պայմանագրի երաշխիքի շրջանակներում: Նման օրինակ կարող է ծառայել մեքենաների պետհամարանիշների տպագրությունը, երբ Ոստիկանությունը պայմանագիր կնքելով մատակարար կազմակերպության հետ (2022 թվականին «Ձնակ Ստանդարտ» ՍՊԸ), ձեռք է բերում օգտագործման համար պատրաստի ապրանք, կամ Ռադիոցանցի ձեռքբերումը (2022 թվականին «Տոպազ 95» ՍՊԸ), որի մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարվել են շարժական ռադիոկայաններ, դյուրակիր ռադիոկայաններ, սերվերային համակարգ և այլն, կամ Մոբայլ համակարգի ձեռքբերման պայմանագիրը, որը իրենից ներկայացնում է տարբեր բաղադրիչներից կազմված մեկ արդյունք: Տվյալ դեպքերում մատակարարները պատասխանատու են պատրաստի արդյունքի տեխնիկական ձևավորման փուլերի ողջ շղթայի համար և ամբողջությամբ:

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-ՏՎ/ԿԱՐ

ՀՀ Ոստիկանությունը, սեփական կարիքների համար 11.11.2021 թվականի ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-ՏՎ/ԿԱՐ ծածկագրով հայտարարել է գնանշման հարցում, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով պետք է առաջարկվեր կնքել ոստիկանական համազգեստի կարի ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):
Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ կարի ծառայությունների /50831100/503/ մատուցման ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն), որոնք խմբավորված են 1 չափաբաժում՝ կարի ծառայություններ:
22.11.2021 թվականին ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-ՏՎ/ԿԱՐ ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի N2 արձանագրության համաձայն հայտ էր ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն: Միևնույն ժամանակ, որոշում է կայացվել մասնակցին հրավիրելու բանակցությունների՝ առաջարկված գնի նվազեցման նպատակով, և օրը նշանակվել է 26.11.2021թվականը:

26.11.2021 թվականին ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-ՏՎ/ԿԱՐ ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի N3 արձանագրության համաձայն առաջարկված գնի նվազեցում չի կատարվել՝ «ԱՆԳԱ ՏՐԱՆՍ» ՍՊԸ առաջարկած բոլոր ծառայությունների միավորների արժեքի հանրագումարը կազմել է՝ 764.0 հազ. դրամ/ներառյալ ԱԱՀ/, որը հանձնաժողովը գնահատել է որպես նվազագույն գնային առաջարկ: Արդյունքում *որոշում է կայացվել մասնակցի հետ կնքել* ոստիկանական համազգեստի կարի ծառայությունների մատուցման ձեռքբերման պայմանագիր՝ նախահաշվային առավելագույն 50,000.0 հազ. դրամով: Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի առթիվ արվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

07.12.2021-ին կնքվել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-ՏՎ/ԿԱՐ ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի համաձայն մատուցման ենթակա ընդհանուր ծառայությունների առավելագույն գինը կազմում է 50,000.0 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022-ՏՎ/ԿԱՐ գնման պայմանագրի 10.03.2022 թվականի N1 Համաձայնագրով հաստատվել է պայմանագրով սահմանված 50,000.0 հազ. դրամը, որի վճարումը կիրականացվի համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի համապատասխան:

29.03.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N1 արձանագրության համաձայն մատակարարվել է 5,864.8 հազ. դրամ ընդհանուր արժեքով ծառայություն, 06.05.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N2 արձանագրության համաձայն մատակարարվել է 1,127.3 հազ. դրամ ընդհանուր արժեքով ծառայություն, 26.05.2022թ. պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N3 արձանագրության համաձայն մատակարարվել է 2,115.5 հազ. դրամ ընդհանուր արժեքով ծառայություն, 14.06.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N4 արձանագրության համաձայն մատակարարվել է 951.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով ծառայություն, 15.06.2022 թվականի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N5 արձանագրության համաձայն մատակարարվել է 1,171.4 հազ. դրամ ընդհանուր արժեքով ծառայություն: Ընդհանուր թվով մատակարարված ծառայությունների դիմաց տրվել է վճարման հանձնարարականներ՝ 11,229.8 հազ. դրամի չափով:

Տեխնիկական բնութագրով հաստատված մատակարարված հանդերձանքի կտորի խտության և բաղադրության ստուգման նպատակով ՀՀ ոստիկանությունն անհրաժեշտության դեպքում չի կարող պահանջել լաբորատոր ստուգման եզրակացություն, քանի որ պայմանագրով նման նախապայմաններ չեն եղել: Հետևաբար, որակի հետ կապված ռիսկը ոչ միայն մեծանում է, այլ ամբողջությամբ ընկնում է պատվիրատուի վրա: Իսկ մատակարար կազմակերպության կողմից ներկայացված կտորի փաթեթի վրա առկա պիտակը /կտոր արտադրող ֆաբրիկայի կողմից տրամադրած/, անկախ նրանից, թե ինչպիսի տեղեկատվություն է պարունակում կտորի որակի վերաբերյալ, չի կարող երաշխավորել, որ մատակարարվող վերջնական հանդերձանքի կտորը համապատասխանելու է տեխնիկական բնութագրով հաստատված չափանիշներին:

# 6 ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

## ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ԹԻՎ 164-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ոստիկանապետի 2022 թվականի սեպտեմբերի 5-ի (ՀՀ ՀՊ մտից թիվ ՀՊՄ274/2022) գրությանը կից ներկայացված տեղեկանքի համաձայն ՀՀ ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունում ներկայացված թվով 10 առաջարկություններն ամբողջությամբ ընդունվել են: Գրությանը կից ներկայացված ՀՀ ոստիկանության պետի տեղակալի՝ 2022 թվականի օգոստոսի 17-ին հաստատված ՀՀ ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունում ներկայացված առարկությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծրագրում աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1**

| Առաջարկությունները | Միջոցառումը | Պատասխանատու | Ժամկետը |
|---|---|---|---|
| 1. Միջոցներ ձեռնարկել՝ ՀՀ ոստիկանության պետի 01.02.2020թ.-ի Թիվ 5-Լ և 14.12.2020թ.-ի Թիվ 42-Լ հրամանների բովանդակությունները Հայաստանի Հանրապետությունում գնումների ոլորտը կանոնակարգող օրենսդրության, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» N 751-Լ որոշմամբ հաստատված կանոնադրությամբ սահմանված լիազորող նորմերին համապատասխանեցնելու ուղղությամբ՝ պահպանելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով | Կազմել և սահմանված ընթացակարգով ՀՀ ոստիկանության պետի հաստատմանը ներկայացնել գնումների մասին օրենսդրությամբ պատվիրատուի ղեկավարին վերապահված լիազորությունների իրականացումը՝ ՀՀ ոստիկանության տվյալ տարվա բյուջեի 1158 ծախսային ծրագրի միջոցառումներով (բացառությամբ՝ ոստիկանության զորքերի պահպանման ծախսերի՝ 11010 միջոցառմամբ) նախատեսվող հատկացումների հաշվին կատարվող գնումների մասով՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանին, իսկ նշված ծախսային ծրագրի 11010 միջոցառման մասով՝ ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար, ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, գնդապետ Հ. Բաբայանին հանձնարարելու | Իրավաբանական վարչություն | 26.08.2022 թ. |

| | | | |
|---|---|---|---|
| նախատեսված օրենսդրական տեխնիկայի կանոնները: Նշված հրամաններից բխող պատվիրակված լիազորությունների իրավաչափ, ամբողջական, ժամանակին ու պատշաճ կատարման նկատմամբ սահմանել վերադասության կարգով հսկողություն: | վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագիծ:<br><br>Պայմանավորված ՀՀ գործադիր մարմինների համակարգում ներքին գործերի նախարարության կազմավորման հանգամանքով և նկատի ունենալով ենթակա մարմինների աջակցող գործառույթները, ներառյալ այդ մարմինների կարիքների համար գնումների գործընթացները նոր ձևավորվող ՆԳՆ-ին վերապահելու կառավարության դիրքորոշումը, ոստիկանությունում գնումների համակարգող ստորաբաժանումը՝ տնտեսական վարչության գնումների բաժինը, մի շարք գնման առարկաների պատասխանատու հանդիսացող տնտեսական վարչության կազմից առանձնացման հարցին անդրադառնալ ՆԳՆ կազմավորման արդյունքում ոստիկանության նոր կառուցվածքի ձևավորման ընթացում: | Շտաբ | ՆԳՆ ձևավորման ընթացքում |
| **2.** Միջոցներ ձեռնարկել ՀՀ ոստիկանությունում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելի հիման վրա կազմակերպելու ուղղությամբ, որը իրենից ներկայացնում է օրենսդրությամբ սահմանված որոշակի սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և արարողակարգերի ամբողջություն: | Ավարտել ոստիկանությունում հաշվապահական հաշվառումը, օրենսդրության պահանջներին համապատասխան համակարգչային ծրագրով և կենտրոնացված կարգով վարման հնարավորություն ընձեռնող ավտոմատացված համակարգի ներդրման նպատակով խորհրդատուի ընտրության տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները:<br><br>Նկատի ունենալով ՆԳՆ ձևավորման արդյունքում ոստիկանության կազմակերպական կառուցվածքում նախատեսվող փոփոխությունները, ներկայացնել շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցված դիրքորոշում՝ հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի ներդրման նպատակով խորհրդատուի ընտրության մրցույթի հայտարարման նախընտրելի ժամկետի վերաբերյալ: | Ֆինանսաբյուջետային վարչություն<br><br>Շտաբ, Ֆինանսաբյուջետային վարչություն | 16.09.2022 թ.<br><br>ՆԳՆ ձևավորման ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| 3. Հետամուտ լինել ՀՀ ոստիկանությունում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջի համապատասխան ներքին աուդիտի համակարգի ներդրման, ռազմավարական/տարեկան պլանավորման ու իրականացման հարցում՝ ՀՀ ոստիկանությունում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում, գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանության հավաստիացման, տեղեկությունների վստահելիության և ամբողջականության, ինչպես նաև կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիության նպատակով: | Հարցին անդրադառնալ Ներքին գործերի նախարարության ստեղծումից հետո (հիմքը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի թիվ 02/16.4/12035-2021 հանձնարարականը) | Շտաբ, Ֆինանսաբյուջետային վարչություն | ՆԳՆ ձևավորման ընթացքում |
| 4. ՀՀ ոստիկանության կողմից պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն մասով պլանավորման ցուցանիշները առավել իրատեսական (էական տարբերությունները հնարավորինս բացառելու համար) սահմանելու նպատակով պարբերաբար վերանայել պլանային ցուցանիշները՝ պարտադիր հաշվի առնելով մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում կատարված լրացումների և/կամ փոփոխությունների արդյունքում երևույթաբար առաջացող էական տատանման գործոնները: | Գործուն և հետևողական միջոցներ ձեռնարկել ոստիկանության միջնաժամկետ ծախսերի ծրագրերի, ինչպես նաև յուրաքանչյուր տարվա բյուջեի մուտքերի և ելքերի պլանային (ելակետային) ցուցանիշների հիմնավորվածությունն էապես բարելավելու, առավել իրատեսական ցուցանիշներ ներկայացնելու և սահմանելու ուղղությամբ: | Ֆինանսաբյուջետային վարչություն, Կենտրոնական ապարատի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումներ, Մարզային վարչություններ | Շարունակական |
| 5. Այսուհետ ձևավորվող գնահատող հանձնաժողովների կազմում անդամի կարգավիճակով ընդգրկվել միայն՝ մասնակիցների որակավորումը և | Հետևողականություն ցուցաբերել գնահատող հանձնաժողովների կազմում, բոլոր դեպքերում, անհրաժեշտ և բավարար մասնագիտական կարողություններ ունեցող ծառայողներ, | Գնումների պատասխանատու ստորաբաժանումներ | Շարունակական |

| | | | |
|---|---|---|---|
| առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն ունեցող, պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչներ, ընդ որում, եթե այդպիսիք բացակայում են կամ կախված գնման առարկայի առանձնահատկություններից չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածի (կարգի) 15-րդ կետը, հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրել համապատասխան փորձագետ (մասնագետ): | իսկ անհրաժեշտության դեպքում նաև հրավիրված համապատասխան փորձագետ (մասնագետ) ընդգրկելու հարցում: | | |
| **6.** Գնումների ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ սահմանված տրամաբանությամբ գնման գործընթացներին առնչություն ունեցող ՀՀ ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների համապատասխան պաշտոնատար անձանց մասնագիտական ունակությունների որակը բարելավելու/բարձրացնելու նպատակով պարտադիր, որոշակի պարբերականությամբ, ապահովել համապատասխան դասընթացների ու վերապատրաստումների մասնակցություն, ինչպես նաև քննարկել համապատասխան մասնագիտացում ունեցող կադրերի ներգրավման հարցը: | Միջոցներ ձեռնարկել գնումների լիազոր մարմնի՝ ՀՀ Ֆինանսի միջոցով ոստիկանության գնումների պատասխանատու և համակարգող ստորաբաժանումների համապատասխան ծառայողների որակավորման բարձրացման, ինչպես նաև գործնական օգնության դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ: | Տնտեսական, ինչպես նաև գնումների պատասխանատու մյուս ստորաբաժանումներ | 2022 թ.-ի օգոստոս-հոկտեմբեր ամիսներ |

| | | | |
|---|---|---|---|
| **7.** Գնման առարկաների տեխնիկական բնութագրերը կազմելիս անվերապահ առաջնորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համապատասխան դրույթներով սահմանված պահանջներով, մասնավորապես՝ գնման առարկաների բնութագրերը սահմանել ամբողջությամբ և հստակ, որոնք կնկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Մատակարարվելիք ապրանքի տեխնիկական պարամետրերում սահմանել այնպիսի տվյալներ, որոնք չափելի են ու հետևաբար, սահմանված են «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի տրամաբանությամբ, ինչպես նաև դրա պահանջներից բխող ՀՀ կառավարության 13-ը սեպտեմբերի 2012 թվականի «Մեծությունների միավորների, չափումների սանդղակների անվանումը, նշագրումը, գրելաձևն ու դրանց կիրառման կանոնները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1938-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1181-Ն որոշմամբ: Ելնելով գնման առարկայի առանձնահատկություններով պայմանավորված հաստատված պարտադիր թվային ցուցանիշների համադրման բարդություններից՝ գնման պայմանագրերում նախատեսել տվյալ առարկաների լաբորատոր-փորձագիտական եզրակացություն ներկայացնելու պահանջ: | Աշխատանքներ իրականացնել յուրաքանչյուր գնման առարկայի տեխնիկական բնութագիրը օրենդրությամբ սահմանված պահանջներին խստիվ համապատասխան կազմելու կարողություններն ըստ ամենայնի և հնարավոր սեղմ ժամկետներում բարելավելու ուղղությամբ: | Գնումների պատասխանատու, ինչպես նաև համակարգող ստորաբաժանումներ | Շարունակական |

| | | | |
|---|---|---|---|
| **8.** Գնման գործընթացները և դրանց նախորդող այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացնել պլանավորված պահանջարկի ժամկետների տրամաբանությամբ՝ պարտադիր հաշվի առնելով այդ գործընթացներում երևույթաբար առկա չկայանալու կամ ընթացքը բողոքարկելու «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածով (կարգով) նախատեսված կարգավիճակները ու դրանց հետևանքում վրա հասնող ժամկետները: | Ոստիկանության բյուջետային գործընթացին համահունչ ապահովել գնման պլանով նախատեսվող բոլոր գնման առարկաների գնման ընթացակարգերի ժամանակին և պատշաճ իրականացումը, բացառելով որևէ դեպքում ուշացման պատճառով գնման ոչ մրցակցային ձևերի կիրառումը: | Գնումների պատասխանատու, ինչպես նաև համակարգող ստորաբաժանումներ | Շարունական |
| **9.** Քննարկել 13.01.2022թ.-ին «Տոյոտա Երևան» ՍՊ ընկերության հետ կնքված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022–ԱՎՏՈ-1» պայմանագրով պետության կարիքների համար 2,443,380.0 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գումարով ձեռք բերված ընդամենը 140 հատ ավտոմեքենաների գնման ու մատակարարման գործընթացում հաշվեքննությամբ արձանագրված մի շարք անհամապատասխանությունները՝ ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածի (կարգի) 33-րդ կետի 8) | ՀՀ ոստիկանության պետի հանձնարարությամբ ուսումնասիրել և ներկայացնել դիրքորոշում 13.01.2022թ.-ին «Տոյոտա Երևան» ՍՊ ընկերության հետ կնքված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022–ԱՎՏՈ-1» պայմանագրով պետության կարիքների համար 2,443,380.0 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գումարով ձեռք բերված ընդամենը 140 հատ ավտոմեքենաների գնման ու մատակարարման գործընթացում հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ: | Ներքին անվտանգության վարչություն | 29.08.2022 թ. |

| | | | |
|---|---|---|---|
| ենթակետով սահմանվածի համատեքստում: | | | |
| **10.** Հայաստանի Հանրապետությունում գնումների գործընթացի կարգավորումն ու համակարգումն իրականացնող լիազորված մարմնի համապատասխան մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման հետ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2) ենթակետով սահմանվածի շրջանակներում քննարկել 17.12.2021 թվականին «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊ ընկերության հետ կնքված 103,514.4 հազ. դրամ ընդհանուր գումարով ընդամենը 3200 զույգ կիսաճտքավոր և ամենօրյա կոշիկների ձեռք բերման «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ /ՀԱՆԴԵՐՁԱՆՔ–8» պայմանագրի տեխնիկական բնութագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին հնարավորինս համապատասխանեցնելու հարցը՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածի (կարգի) 56-րդ կետի պահանջները: | Միջոցներ ձեռնարկել ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման հետ տվյալ պայմանագրի տեխնիկական բնութագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին հնարավորինս համապատասխանեցնելու հարցում մեթոդական օժանդակություն ստանալու համար: | Տնտեսական վարչություն | Մինչև ս/թ օգոստոսի 29-ը |

**ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ԹԻՎ 164-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ և «ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԴՐԻՄ» ՍՊԸ ՄԻՋև ԿՆՔՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ N ԲԸԱՀԾՁԲ-03/2017 ԳՆՄԱՆ

2017 թվականի փետրվարի 15-ին ՀՀ ոստիկանության /այսուհետ՝ Կառավարման հիմնադիր/ և «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ /այսուհետ՝ Հավատարմագրային կառավարիչ/ միջև կնքված գույքի հավատարմագրային կառավարման թիվ ԲԸԱՀԾՁԲ-03/2017 պայմանագրի համաձայն /գործողության ժամկետը՝ 5 տարի/ ՀՀ ոստիկանությունը ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման նկատմամբ տեխնիկական վերահսկողության համար նախատեսված և ՀՀ ոստիկանության հաշվեկշռում գտնվող գույքը, որի կազմը նախատեսված է նույն պայմանագրի Հավելված 1-ով, հանձնում է Հավատարմագրային կառավարչի հավատարմագրային կառավարմանը, իսկ Հավատարմագրային կառավարիչը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ հիմնադրի:

Հավատարմագրային կառավարման նպատակը ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության /այդ թվում՝ ճանապարհային երթևեկության կանոնների/ պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման /այդ թվում՝ իրավախախտումների հայտնաբերման/ համար նախատեսված համակարգերը կառավարելու, շահագործելու և տեխնիկական սպասարկում իրականացնելու, ներառյալ՝ հայտնաբերված իրավախախտումների գործով վարչական ակտերի /որոշում/ նախագծեր կազմելու և վարչական ակտ /որոշում/ կայացնող վարչական մարմնին /պաշտոնատար անձին/ ներկայացնելու միջոցով դրանց անխափան աշխատանք ապահովելն է:

Պայմանագրով նախատեսված է, որ Կառավարման հիմնադիրը պետք է հատուցի հավատարմագրային կառավարման հանձնված համակարգերի կառավարման, շահագործման և տեխնիկական սպասարկման նպատակով Հավատարմագրային կառավարչի կողմից փաստացի կատարված ծախսերը, իսկ վարձատրությունը կազմում է՝ ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման նկատմամբ տեխնիկական վերահսկողության համակարգերի միջոցով նշանակված տուգանքների փաստացի գանձումների և վերը նշված հատուցման գումարների տարբերության 10 տոկոսը՝ ներառյալ հարկերը, տուրքերը և այլ վճարները:

Պայմանագրի 2.1.4 և 2.2.11 կետերի համաձայն՝ մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 20-ը ՀՀ ոստիկանության հաստատմանն է ներկայացվում հաջորդ տարվա ծախսերի նախահաշվի նախագիծը, որը ՀՀ ոստիկանության կողմից քննարկվում և հաստատվում է 5 աշխատանքային օրերի ընթացքում: 2022թվականի ծախսերի նախահաշիվը հաստատվել է 08.02.2022 թվականին, որը հետագայում փոխվել է 16.05.2022 թվականին: Չի պահպանվել ԲԸԱՀԾՁԲ-03/2017 պայմանագրի պահանջը:

ՀՀ ոստիկանությունը «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ – «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ պայմանագրի շրջանակներում ըստ առանձին բաղադրիչների մատուցված ծառայությունների մասով չստանալով տեղեկատվություն, հատուցում է ծախսերը: Կարծում ենք, ծախսերի արդյունավետության բարձրացման տեսանկյունից պետք է կատարելագործել հաշվետվողականության մակարդակը:

ՀՀ ոստիկանության 2022 թվականի պետական բյուջեի առաջին երեք ամիսների կատարման նկատմամբ իրականացված ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արդյունքում Հաշվեքննիչ պալատի արձանագրված արդյունքների վերաբերյալ ՀՀ ոստիկանապետի 2022 թվականի հուլիսի 22-ի թիվ 29/1314 (ՀՀ ՀՊ մտից թիվ ՀՊՄ/182/2022) գրությամբ ներկայացված առարկությունների և բացատրությունների համաձայն «ընթացքի մեջ է Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ-ին հավատարմագրային կառավարման վերը նշված պայմանագրի շրջանակներում հատուցման գումարների օրինականության պարզման նպատակով հարուցված քրեական գործը»:

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՈԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-8

ՀՀ ոստիկանության կարիքների համար «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ–8» ծածկագրով 6 չափաբաժիններով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու արդյունքում 5 /կիսաճտքավոր կոշիկներ/ և 6 /ամենօրյա կոշիկներ/ չափաբաժիններով մասնակցել և հաղթող է ճանաչվել «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն: Միայն 6 /ամենօրյա կոշիկներ/ չափաբաժնով մյուս մասնակիցն է հանդիսացել՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն: Պայմանագիրը կնքվել է 17.12.2021 թվականին, պայմանագրի գինը՝ 103,514.4 հազ. դրամ/այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը/, որի շրջանակներում նախատեսվում է մատակարարել 1600 զույգ կիսաճտքավոր և 1600 զույգ ամենօրյա կոշիկներ: Համաձայն պայմանագրի 8.5 և 8.13 կետերի 10.03.2022թ. կնքվել է համաձայնագիր 1-ը, որով առաջին խմբաքանակի մատակարարումը նախատեսվել է համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո, 20 օրվա ընթացքում՝ 240 զույգ կիսաճտքավոր կոշիկներ՝ 8,351.6 հազ. դրամ և 240 զույգ ամենօրյա կոշիկներ՝ 7,175.5 հազ. դրամ արժեքներով՝ ընդամենը՝ 15,527.2 հազ. դրամ արժեքով: Տարվա առաջին եռամսյակում մատակարարվելիք ապրանքների նմուշները հաստատված չեն:

Պայմանագրի տեխնիկական բնութագրերը ուսումնասիրելիս արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես.

<u>Մատակարարվելիք կիսաճտքավոր կոշիկների տեխնիկական բնութագիրը հետևյալն է</u>՝ Սև գույնի, մասամբ կաշվից և բալիստիկ նեյլոնից: Ներբանը պատրաստվում է մաշակայուն նյութից, երկարաժամկետ օգտագործման համար: Քթամասը և կրնկամասը կոշտ և կաշվից: Առաջամասի, միջնամասի և հետևամասի եզրերը բարձր ճնշման տակ միացված են ներբանին սոսնձման եղանակով: Առաջամասի կենտրոնական առանցքով տեղադրված են 5-6 զույգ մետաղյա փոլակներ: Կապումն իրականացվում է սև գույնի քուղերով: Քուղերը ամրացված են կտորի վրա լրացուցիչ կարված կաշվե եզրային ելուստին: Լեզվակը կարված է առաջնամասից մինչև աջ ու ձախ չորրորդ առանցքը: Կոշիկը ներսամասից մինչև ներդիր բացվում է շղթայով: Շղթայի ամբողջ երկարությամբ առկա է կաշվե ներդիր: Կիսաճտքավոր կոշիկը ամուր և հարմարավետ է, նախատեսված է ծմռանը կրելու համար, առաջամասը և ճտքերը ջերմամեկուսիչ նյութից: Ներդիրը կտորե, երկակի խտության: Յուղի և սայթաքման դիմացկուն: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով՝ անցքերով, արկղերի մեջ 9 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Նմուշը և չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

Իսկ <u>ամենօրյա կոշկեղենի տեխնիկական բնութագիր է սահմանվել</u>՝ Սև գույնի, մասամբ կաշվից և բալիստիկ նեյլոնից: Ներբանը պատրաստվում է մաշակայուն նյութից, երկարաժամկետ օգտագործման համար: Քթամասը և կրնկամասը կոշտ և կաշվից: Առաջամասի, միջնամասի և հետևամասի եզրերը բարձր ճնշման տակ միացված են ներբանին սոսնձման եղանակով: Առաջամասի կենտրոնական առանցքով տեղադրված են 4-5 զույգ մետաղյա փոկակներ: Կապումն իրականացվում է սև գույնի քուղերով: Քուղերը ամրացված են կտորի վրա լրացուցիչ կարված կաշվե եզրային ելուստին: Կոշիկը ունի բաձր օդաթափանցություն, ամուր են ու հարմարավետ: Ներդիրը կտորե, երկակի խտության: Ջրի և սայթաքման դիմացկուն: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով՝ անցքերով, արկղերի մեջ 10 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացություն: Նմուշը և չափսը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

**1)*Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններ.***

Վերոնշյալ տեխնիկական բնութագրերում նշված՝ «մասամբ կաշվից», «մաշակայուն նյութից», «երկարաժամկետ օգտագործման համար», «կոշտ և կաշվից», «բարձր ճնշման տակ միացված», «մետաղյա փոկակներ», «կաշվե ներդիր», «ներդիրը կտորե», «ջրի և սայթաքման դիմացկուն», «բարձր օդաթափանցություն», «ամուր են ու հարմարավետ» նկարագրող բառերն ու արտահայտությունները որևէ կերպ չեն սահմանում տեխնիկական պարամետրեր, նույնականացման համար պահանջում են մարդու զգայունության ազդակներով կատարվող ներգործություն, չափելի չեն ուստի որպես գնման առարկայի բնութագրող տվյալ՝ անպիտան են: Մասնավորապես, սահմանված չէ օրինակ՝ 1) թե ի՞նչ հաստությամբ, բնական թե արհեստական «կաշվի» մասին է խոսքը (եթե բանական՝ ապա ի՞նչ կենդանու), 2) ի՞նչ ողջամիտ ժամկետ է ենթադրում «երկարաժամկետ օգտագործման համար» արտահայտությունը, 3) հատկապես ո՞ր «մետաղից» կամ դրա համաձուլվածքներից

պետք է պատրաստված լինեն փոլակները 4) ին՞չպես է չափվելու «մասսամբ, կոշտ, բարձր ճնշման, ամուր, հարմարավետ, բարձր օդաթափանցություն ունենալը», «ջրի և սայթաքման դիմացկուն» լինելու հատկանիշների գոյությունը ու դրանց բավարար լինելը:

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի հետ, այն է՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը»: Ավելին, առկա է անհամապատասխանություն նաև ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածի (կարգի) 13-րդ կետի՝ ...Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:

2)***Հաշվեքննության օբյեկտի բացատրություններն ու պարզաբանումները (առարկություններ չեն ներկայացվել)***՝

Տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ, որ մրցույթի դրված նշված կոշիկների 1-ին խմբաքանակը արդեն իսկ գործարկված նոր պարեկային ծառայության պարեկների համար հատկացվել է ԱՄՆ-ի կողմից, իր միջոցների հաշվին (անհատույց) և նախատեսվել է, որ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք բերվող հաջորդ խմբաքանակները պետք է համապատասխանեն արդեն իսկ անհատույց ստացված տեսականուն: Դրանց տեխբնութագիրը կազմվել է 1-ին խմբաքանակի հետ ստացված նկարագրի թարգմանությամբ, միաժամանակ մրցույթի պայմաններով նախատեսելով, որ նմուշը տրամադրվելու է ընտրված մասնակցին: Մրցույթի տեխպայմաններում նշվել է նաև, որ մատակարարման

ենթակա խմբաքանակի նմուշը մատակարարը պարտավոր է համաձայնեցնել պատվիրատուի հետ, ինչը և ապահովել է:

Ինչ վերաբերվում է «երկարաժամկետ օգտագործման համար» ողջամիտ ժամկետ սահմանելուն կամ չսահմանելուն, ապա կրման ժամկետը՝ 2 տարի, սահմանված է ՀՀ կառավարության 13.12.2013թ N 1446-Ն որոշմամբ:

Ավելին, մատակարար կազմակերպությունը պարտավորվել է խոտան արտադրանքը փոխարինել նորով (եթե այն խոտանվել է ոչ միտումնավոր միջամտության արդյունքում) և այլն: Այլ կերպ ասած հայտարարված և էլեկտրոնային աճուրդի միջոցով իրականացված մրցույթի պայմանները, այդ թվում նմուշը հասանելի և նույնական են եղել բոլոր հնարավոր մասնակիցների համար, դրանով իսկ մրցակցության համար ապահովելով հավասար պայմաններ:

***3)Հաշվեքննողի մեկնաբանությունը՝***

ԱՄՆ-ի կողմից ՀՀ ոստիկանության պարեկային ծառայողներին անհատույց տրամադրված կոշկեղենի խմբաքանակի հետ ստացված գրավոր նկարագրի բառացի թարգմանությամբ «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ–8» գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի կազմման փաստի մեջբերումը, որպես Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող պետական գնման առարկայի տեխնիկական հատկանիշները բնութագրող հիմնավորում, առնվազն հիմնազուրկ է ու հակասում է ՀՀ գնումների ոլորտը կանոնակարգող օրենսդրության համապատասխան պահանջներին: Մասնավորապես. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-ին մասով սահմանված է՝ <u>ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա</u>: Իսկ, ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածի (կարգի) 13-րդ կետով սահմանված է իմպերատիվ բնույթի պահանջ, այն է՝ ...Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան)

գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից: Ըստ այդմ, գնման հայտը նախագծողի մասնագիտական կարողությունը չպետք է սահմանափակվի բառացի թարգմանության կարողությունով:

Ինչ վերաբերում է ՀՀ ոստիկանության կողմից մեջբերված՝ ՀՀ կառավարության 12-ը դեկտեմբերի 2013 թվականի «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրն ու այն կրելու ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի N 886-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1446-Ն որոշմամբ հաստատած «կոշկեղենի» կրման ժամկետին, ապա հարկ է նշել, որ այդ որոշմամաբ ծառայողների տարբեր խմբերի, տարբեր կոչիկների համար սահմանված են կրման տարբեր ժամկետներ 1-3 տարի, դրանք նախատեսված են ոստիկանության ծառայողին համազգեստ տրամադրելու ու այն ոստիկանության ծառայողների կողմից կրելու կարգին:

Ավելին տվյալ իրավական ակտին համապատասխան կրման տևողություն (մաշակայունություն) ունենալը չի նախատեսվել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ–8» գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրով: Ըստ այդմ ներկայացված բացատրությունը չի ընդունվում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 156-Ա որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքի հիման վրա «ՀՀ ոստիկանություն» հաշվեքննության օբյեկտում ՀՀ պետական բյուջեի 2022 թվականի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն նկատմամբ հաշվեքննության արդյունքում կազմված արձանագրության օրը, այն է 11.10.2022 թվականը, ՀՀ հաշվեքննիչ պալատին որևէ տեղեկատվություն չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների վերացմանը ուղղված միջոցառումների ու դրանց արդյունքների վերաբերյալ:

# 7 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ ոստիկանությանը՝**

**1.** ՀՀ ոստիկանության կողմից պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն մասով պլանավորման ցուցանիշները առավել իրատեսական (էական տարբերությունները հնարավորինս բացառելու համար) սահմանելու նպատակով պարբերաբար վերանայել դրանք պարտադիր հաշվի առնելով ՀՀ ոստիկանության կողմից նախաձեռնվող մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում շարունակաբար կատարվող լրացումների և/կամ փոփոխությունների, ինչպես նաև գլոբալ տնտեսաքաղաքական իրադարձությունների արդյունքում երևույթաբար առաջացող էական տատանման գործոնները:

**2.** Քննարկել, սույն ընթացիկ եզրակացության 4-5-րդ մասերում նշված ապրանքների և/կամ ծառայությունների մի շարք պայմանագրերի մատակարարների կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագրերն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու հարցերը՝ պահանջելով վերջիններիցս Միջազգային և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերով փոխհատուցել իրենց մեղքով պատվիրատուի (ՀՀ ոստիկանության) կրած վնասներն այն ծավալով, որոնց մասով պայմանագրերը կլուծվեն:

**3.** Քննարկել 07.01.2022 թվականին ՀՀ ոստիկանության և «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊ ընկերության միջև կնքված պետության կարիքների համար տեղագրական քարտեզների կազմման ծառայությունների մատուցման պետական գնման «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2022/Քարտեզ» պայմանագրի շրջանակներում ՀՀ ոստիկանությանը հանձնված արդյունքների տվյալ պայմանագրի տեխնիկական բնութագրի մանրամասներին համապատասխան լինելու հարցը՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան ծրագրային կարգաբերումներ ՀՀ ոստիկանության կողմից այդ ծրագրերը կիրառող բոլոր տեխնիկական միջոցներում:

**4.** Այն դեպքերում, երբ գնման առարկաների տեխնիկական բնութագրերը պարունակում են որոշակի հստակ ճշտության պարամետրերի ապրանքի մատակարարում, իսկ պայմանագրերը նախատեսում են այդ ապրանքների նույնականացման համար մատակարար կազմակերպության միջոցների հաշվին լաբորատոր փորձաքննության եզրակացության պահանջ՝ հետամուտ լինել, որպեսզի ՀՀ ոստիկանության պատասխանատու ստորաբաժանումները, ապրանքներն ընդունելուց առաջ, պարտադիր պահանջեն լաբորատոր փորձաքննության արդյունքները՝ իրացնելով պայմանագրով վերապահված իրավունքը:

**5.** Գնման ընթացակարգերը որակելիս պահպանել ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 8) ենթակետով սահմանված պահանջը, այն է՝ գնման ընթացակարգը որպես ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերում որակելու համար հաշվի է առնվում կնքվելիք պայմանագրի գնի մեջ դրանցից որևէ մեկի մեծ տեսակարար կշիռ ունենալու հանգամանքը, բացառությամբ շինարարական աշխատանքների: Այդ նպատակով անհրաժեշտ է գնման հայտերը կազմելիս պարտադիր տարանջատել գնման առարկայում ապրանքների և մատուցվող ծառայությունների արժեքները, ինչը հնարավորություն կընձեռի նաև սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի գրանցումն իրականացնել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջների համապատասխան՝ գործառնությունների չափման միավորները դրամական և/կամ բնաիրային արտահայտությամբ հիմնական միջոցների ու սկզբնական արժեքով հաշվառվող ակտիվների մաշվածության հաշվարկման գործընթացները:

**6.** Գնումների դիմաց վճարումներ կատարելիս պահպանել ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն

որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 5) ենթակետով սահմանված պահանջը, այն է՝ գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պատվիրատուն պարտավոր է ապահովել պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ: Հետայսու տեղիք չտալով սահմանված կարգով չհաշվարկված ու չգանձված տույժերի վերաբերյալ մատակարարների կողմից ՀՀ ոստիկանությանը տվյալ պարտավորության մասին հիշեցման նախադեպերին:

**7.** Գնման գործընթացները և դրանց նախորդող այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացնել պլանավորված պահանջարկի ժամկետների տրամաբանությամբ՝ պարտադիր հաշվի առնելով այդ գործընթացներում երևույթաբար առկա չկայանալու կամ ընթացքը բողոքարկելու «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 4-ը մայիսի 2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման հավելվածով (կարգով) նախատեսված կարգավիճակները ու դրանց հետևանքում վրա հասնող ժամկետները:

**8.** Ի լրումն ՀՀ ոստիկանությունից 05.09.2022 թվականին (ՀՊ մտից՝ ՀՊՄ/274/2022) «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան ներկայացված 2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 164-Ա որոշմամբ հաստատված ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվությանը, ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացնել նշված ընթացիկ եզրակացության «առաջարկություններ» մասի 9-րդ (13.01.2022 թվականին «Տոյոտա Երևան» ՍՊ ընկերության հետ կնքված «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-43-2022–ԱՎՏՈ-1» պայմանագիր) և 10-րդ (17.12.2021 թվականին «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊ ընկերության հետ

կնքված «ՀՀ ՈՒԱՃԱՊՁԲ-2022-ՊԱՐԵԿ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ–8» պայմանագիր) կետերով բերված առաջարկությունների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն:

**9.** Ի լրումն ՀՀ ոստիկանությունից 05.09.2022 թվականին (ՀՊ մտից՝ ՀՊՄ/274/2022) «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան ներկայացված 2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 164-Ա որոշմամբ հաստատված ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվությանը՝ ՀՀ ոստիկանությունում (ՆԳՆ պետական կառավարման մարմնի ձևավորմանը ընդառաջ) հաշվապահական հաշվառումը կարգավորող ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելի հիման վրա կազմակերպելու նպատակով խորհրդատուի ընտրության մրցույթի հայտարարման պայմանների ու ժամկետների որոշակիության վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատին ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի համապատասխան՝ Ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը պարտավոր է մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

Կարեն Կարապետյան

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

« 27 » <u>հոկտեմբերի</u> 2022 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Մ.Բաղրամյան 19, Երևան

Հայաստանի Հանրապետություն